

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ**

**ՍՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹԻՒՆՔ**

**ԵՒ**

**ՎԵՐԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՔ**

**Բ. ՏՆՏՐԱԿ**



1936

**ՏՊԱՐԱՆ ԴՊՐԵՎԱՆՈՒՑ**

**ԿԱԹՈՒԿՈՍՈՒԹԵԱՆ ԿԻՆԻՄՑ**

**ԱՆՔԻԼԻԱՍ - ԼԻՐԱՆԱՆ**

392

Պ-21

32  
7-21

0.120 - 10

**ՊԱՃՏՕՆԱԿԱՆ**  
**ԱՄՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹԻՒՆՔ**  
**ԵՒ**  
**ՎԵՐԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆՔ**

Բ. ՏԵՏՐԱԿ



1936

**ՏՊԱՐԱՆ ԴՊՐԵՎԱՆՈՒՑ**  
**ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԿԻՆԿԻՈՑ**  
**ԱՆԹԻԼԻԱՍ - ԼԻՎԱՆԱՆ**

18 JUL 2013

Բ.

Ամուսնալուծմանց ներկայ տեսակը անցեալը վերազարթուց մեզս. ի՞նչ անօրինակ հակադրութիւն: Հայոց փափկասուն եւ նախարարազն կանայք, որոց այրերը Պարսկաստան էին մոգեկրօնիկ Շահի հրաւիրանօք, պիտի մահուան դասապարտուէին, եթէ չընդունէին մոգակրօնութիւնը, իսկ անոնց կիները օրհնեղբերով կը մխիթարուէին յոյսով, թէ անպասճառ պիտի վերադառնան իրենց այրերը օճախները անվթար պահպանելու:

Այս Հինգերորդ դարու հարազատ պատկերն է:

Ներկայիս հայ կանայք յակամայից երկոտանի եւ մարդախոռոչ բորենեաց քնայինն եւ հեռախոսութեան մասնուած անկոխ անապասներու մէջ դժոխային կեանք մը կը քաշուեն, որուն վերջ պիտի դրուէր Միջագետաց Տեր-Ջօրի մէջ՝ կիսամերկ եւ սովալլուկ: Իսկ ամօթխած կոյսեր եւ դեռանաս հարսեր իրենք գիրենք Հայոց Սփրասին կը յանձնէին, չը խաթարելու համար պարկեճաստուն եւ փափկանաց համբաւնին: Օրհնեալ, հազարիցս օրհնեալ անոնց սուրբ յիշատակը:

Հայրական սիրով կը յորդորեմք մեր զաւակները առանց յարանուանական խտրութեան, որ ազգային ոսկեդարը վերակոչեն ի պայծառութիւն, ըստ ոսկեգրիչ Նղիշէի Հօր մերոյ, Ս. Նկեղեցւոյ:

ՍՍՀՍԿ Բ. ԿԹՎ. ԿԻՎԻԿԻՈՅ

1936

Կարող իկոսարան  
Անթիլ իաս—Լիբանան



65559-67

## Ա Ջ Գ

[Ա.Ռ.Ա.ԶԻՆՆԻ ՏԵՏԵՐԱԿԻՆ(Գ)]

Նկատելով որ ըստ Եկեղեցական օրինաց ամուսնալուծեալ և վերամուսնութենէ զրկեալ արք և կանայք տեղափոխուելով յաճախ իբրեւ այրի, կամ ազապ կը ներկայանան և անխիղճ ու զանազան վկաներու, և կամ Միութիւններու հաւատարմագրերով կը յաջողին խաբել Հոգեւոր իշխանութիւնները և նոր պսակով իրենց հեշտամուտութիւնը յագեցնել և ընտանեկան դժոխային նոր բոյներ կամ ճահիճներ կազմել:

Բարուց ապականութեան և ընտանեկան յարկերու քայքայման հնար եղած չափով այս հոսանքին առաջն առնելու համար, պատշաճ դատուեցաւ ներգաղթի 1919էն սկսեալ տրուած վճիռներն և յետ այսու տրուելիքները ի գիտութիւն և ի զգուշութիւն հրատարակութեան տալ:

(\*) Ա. Տեսակը հրատարակուած է 1925ին, Պէրուս Ա. Թաւեհան Տպարանէն:



Բ.

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹԻՒՆՔ

Ե Ի

ՎԵՐԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՔ

1925

1. Յուն. 19.—Քիչիֆլիցի Յակոբ Ալթունեան 1924 Յունիս 4 խնդրագրով կ'ամբաստանէ կինը Սերաստացի Երանուհի Պօղոսեանը, որուն խառնակեցութիւնը հաստատուած ըլլալով հանդերձ՝ առաջին անգամ հաշտուած են: Երանուհին դարձեալ ընտանեկան յարկը լքելով անյայտացած է՝ տանելով միասին տնական կարասիները:

2. Յուն. 19.—Ատանացի Պետրոս Ապաճեան առաջին ամուսնալուծմամբ վերամուսնացած է Ֆրոնուզցի կիլիկիա Փանոսեանի հետ, և լքելով ընտանեկան յարկը անյայտացած է: Հետապնդութիւնք անհետեւանք մնացեր են: Պետրոսի պարտաճանաչութիւնը թէեւ հաստատուած է, սակայն նկատուածն արժանի են կրկին կլինելու անյայտացումը:

3. Յուն. 19.—Ծարաէրէցի Փիլիպպոս Փաշաեան ամուսնացած է համագիւղացի Սրբուհիի հետ, որ միամսեայ կենակցութենէ ետքը ընտանեկան յարկը լքելով փախած է: Փիլիպպոս հետապնդութեամբ Զահլէ կը գտնէ հոմանիի մը հետ, որ հարցաքննութեան ատեն անպատկառօրէն յայտարարեր է իր խառնակեցութիւնը և ի վերջոյ թիւրք հոմանիին հետ Զահլէէն ալ անյայտացած է:

4. Յուն. 19.—Քէսապցի Յակոբ Բէպէկեան 1920ին ամուսնացած է Ֆրնտըճազցի Սառա Քէպապեանի հետ:

առաջատար յաջորդ օրը կը լքուի իբրեւ կուսապղծեալ : Քննութեամբ կը հաստատուի որ անչափահաս եւ անգիտակից՝ խարուած է Ահմէտ Օղլու Մահմէտէն : Սառան պատուախնդիր եզրօրմէն չ'ընդունուիր : Արժ. Տ. Գրիգոր քահանայն ազգայնոյ մը պաշտպանութեան կը յանձնէ , բայց ի դարձան անօգնականութեան վերամուսնութիւն կը խնդրէ :

5. Յուն. 19.— Էօզէրուիցի Յովհաննէս Էօրտէկեանի կինը , Տօտոյ Յակօբ Պոյաճեան , մէկուկէս տարի առաջ ընտանեկան յորկը լքած՝ հանրատան մէջ կ'ապրի . Յովհաննէս այս ցաւալի կացութենէն ազատելու համար ամուսնալուծում կը խնդրէ :

Հինգ խնդրագրողները կ'արժանանան վերամուսնութեան , պայմանաւ որ այրի ընդ այլուոյ և կոյս ընդ կուսի լինի ամուսնութիւնը :

6. Փետր. 2.— Տիվրիկցի Յակօբ Յ. Յովհաննէսեան կը փափաքի Ամերիկա գտնուող եզրօր խօսեցեալ 28 տարեկան այրի Արշալոյս Պէօնիկիւլեանը առնել : Նկատելով որ Արշալոյս Արմէնի նշանուած օրէն Յակօբի տան մէջ ապրած է՝

կ'արտօնեմք պսակագրութիւնը :

7. Փետր. 2.— Բալուցի Մկրտիչ Պրժեանը , որ գլխահան ըրած էր Աշոտցի Միսաք Սահակեանի կինը Նեկտար , եկեղեցւոյ հաղորդակցութենէ զրկած էինք : Կը խոստովանի յանցապարտութիւնը եւ կը խնդրէ ընդունուիլ ի ծոց Մայրենի եկեղեցւոյ : Ի յարգանս Կրօն. Ժողովոյ հաւաստումին՝

կ'արտօնեմք ընդունելութիւնը ի ծոց Ս. եկեղեցւոյ :

8. Փետր. 5.— Զէյթունցի Սարգիս Զինգիլեանի կինը Մարաշցի Ժողէֆին կամ Քաթերին Ներօէսեան ցոփակեցութեան սկսած ըլլալուն , հակառակ եղած

խրատներուն եւ մօրը ազիւ արցունքներուն , յայտարարած է թէ խլամ պիտի ըլլայ :

9. Փետր. 5.— Լուծֆիկ Գալէմքէրեան ցոփակեաց՝ Ուրֆացի Յարութիւն Աւագեանի ազջիկը Պայծառ խարկանօք հայ կաթողիկէներու առաջնորդարանը կը տանի եւ իբրեւ պսակեալ վկայական կ'առնէ : Լուծֆիկ իբրեւ զերասան կ'ուզէ օգտագործել Պայծառը , որ չ'ընդունիր եւ հովանաւորող կառավարութիւնը քաղաքականապէս կը բաժնէ : Լուծֆիկի մասնակցութեամբ վաճառատուն մը կը կողոպտուի . հետապընդուններէ ազատելու համար կ'անյայտանայ :

Կ'արժանանի Պայծառի վերամուսնութիւնը , պայմանաւ որ առնելիքը բարեբարոյ եւ պարկեշտ ըլլայ :

10. Փետր. 11.— Գօնեացի Տիգրան Զ. Զօրպաճեանի ամուսնական խնդրոյն համար տրուած բացատրութեան համաձայն Տիգրան ի հասակի 32 ամաց պսակուած է համաքաղաքացի 19 ամեայ Հնազանդ Յակօբեանի հետ : Տարագրութեան՝ շատերու նման բռնաեղծուած էր : Քննութեամբ և վկայութեամբ ամուսնութենէն առաջ անբասիր կեանք ունեցած չէ :

Հնազանդը կը դատապարտուի իբրև անհաւատարիմ՝ խակ կ'արժանանի Տիգրանի վերամուսնութիւնը , պայմանաւ որ պարկեշտութիւնը վկայեալ այրի մը ըլլայ առնելիքը :

11. Փետր. 13.— Բալուայ Զէթ գիւղէն Գրիգոր Սրապեանի տարագրութեան իր խնամոց յանձնեալ մանկամարդ Զարուհի Մանկունուոյ հետ տարիներով ապրելէ ետքը՝ չորրորդ պսակով կ'ամուսնանայ : Տարիքներու անհամեմատութեանը և տարագրութենէ առաջ իրարմէ փոխանցուած ախտաւորութեան պատճառաւ , 1924 Մայիս 12 ին ամուսնալուծուած էին :

Նկատելով որ Գրիգորի Զարուհիէն ունեցած դե-  
ռատի զաւակը՝ մօրեղբայրներու սպառնալիքով մօր-  
մէն բաժնուած անխնամ կը մնայ և արգելք կ'ըլլայ  
հօրը գործի երթալուն՝

Կ'arsosiniff բացառապէս Գրիգորի վերամուսնու-  
թիւնը :

12. Մարտ 11. — Այնթէպցի Աւետիս Անուշեանի  
43 ամեայ կիներ Լուսիա, դուստր՝ հացադործ Հաճի  
Աբէլի, Այնթէպի խուճապահար պարպումին՝ փոխա-  
նակ էրկան հեռակելու, խլամացած, թիւրքի մը հետ  
նիքեահով կապուած է :

Ամուսնալուծուելով, Աւետիսի վերամուսնութիւնը  
արտօնուած է :

13. Մարտ 11. — Զէյթունցի Սուքիասեանի 35  
ամեայ կիներ Մարիամ, վերջին աքսորանքին թէև  
թիւրքի մը հետ կ'ամուսնանայ, սակայն փախչելով  
Ստեփանին կը միանայ : Բաւական ատեն սիրով  
սպրելէն ետքը, առանց բանաւոր պատճառի, տան  
կարասիները ժողուելով կ'անյայտանայ :

Ամուսնալուծուելով, Ստեփանի վերամուսնութիւ-  
նը կ'arsosin.ի :

14. Մարտ 11. — Եօզղատցի Արտաշէս Աթէշեան,  
թէև արգիւլուած էր վերամուսնութենէ, իբրև մտացնոր  
և ջղազար, ոչ միայն պատուաւոր անձինք հակառակը  
կը հաստատեն, նաև իր կարևոր և պատասխանատու  
պաշտօնը յայտնի ապացոյց է Արտաշէսի լրջութեան :

Կ'arsosin.ի Արտաշէսի վերամուսնութիւնը :

15. Մարտ 16. — Ամերիկահպատակ, Այնթէպցի  
Յովսէփ-Ներսէս Պարսումեանը կ'ուզէր օրէնքի հակա-  
ռակ պսակուել Մեծ Պահոց մէջ, մինչդեռ Քօթայի  
բացման ամիսներ կային, չը թոյլատրուեցաւ : Զատ-

կէն ութը օր վերջ կրնայ պսակուել : Օրհնութիւնը  
օրինապահութեան մէջն է :

16. Մարտ 16. — Սիրական Սողոմոնեան, ի Լա-  
ւողիկէ, պսակուած է խարէութեամբ, իբրև ազապ  
ներկայանալով : Իփէքի տարիքի մասին Սիրականը 50  
ներկայացնելը ծայրայեղ ստույթիւն է. որովհետև  
Յարութիւն Այնաճեանն ալ ապրած է Իփէքի հետ՝ ա-  
մուսնանալու խարէութեամբ և 30-35 տարիքին մէջ  
է : Յարութիւն Պաքուպայէն Պաղտատ կ'անցնի և կը  
գրէ Իփէքին որ երթայ միասին ի Պրուսա : Յարու-  
թիւն Ստրեամանի մէջ թուրքանտա Պոյաճեանի հետ  
կ'ամուսնանայ՝ այլազաւան Սրմէէն քահանայի պսա-  
կաբութեամբ :

17. Ապրիլ 29. — Պաղէէցի Շնորհաւոր, 1918 ին  
թիւրքի մը բռնադատութեամբ պսակուած է Լափաշլի-  
ցի նշան Փանոսեանի հետ : Ամուսնալուծում ձեռք  
բերելու համար խառնակեցութեան անձնատուր ե-  
ղած է :

Լուծելով Նշանի և Շնորհաւորի ամուսնութիւնը,  
կ'arsosin.ի Նշանի վերամուսնութիւնը, և Շնորհաւորը  
կը զրկուի իբրև խառնակեաց :

18. Ապրիլ 29. — Էվէրէկցի Միսաք Եթումեան,  
եօթն ամիս առաջ ամուսնացած է Փառանձեմի հետ,  
որ ամուսնալուծում կը խնդրէ Միսաքի առնական կա-  
րողութեան չգոյութեան պատճառաւ . բժշկական քըն-  
նութիւնք անբուժելի համարած են :

Լուծելով Միսաքի և Փառանձեմի ամուսնութիւ-  
նը, կ'arsosin.ի Փառանձեմի վերամուսնութիւնը :

19. Մայիս 1. — Դանիէլ Զաքմաքճեան առաջին  
պսակով միացած է Նազանտէրի և զաւակ չեն ունե-  
ցած : Դանիէլի բարերարոյ կենցաղը կը վկայուի ծա-

նօթ ազգայիններէ և առողջութիւնն ալ բժշկական քննութեամբ :

Լուծուելով Դանիէլի և Նազանտէրի ամուսնութիւնը, կ'արժանանայ վերամուսնութիւնը և Նազանտէրը կը դատապարտուի իրրե ցփակեաց :

20. Մայիս 19.— Խարբերգի Դատեմ գլուզէն Յովհաննէս Տ. Ստեփանեանի ամուսնութիւնը արժանացաւ, որովհետև Յովհաննէսի կինը եղանակաւ Աւետիս Յակոբեանի հետ ամուսնացած և զաւակներու տէր եղած է :

Պետրքի Կրօն. ժողովոյ Համար 100 | 56-58-61

Մայիս 19 ին գրութիւնք :

21. Մայիս 25.— Խարբերգի Սուրէն Տ. Սահակեան, 28 ամեայ, երկու տարի առաջ ամուսնացած է Մարոնի Քէֆա անուն ալրի մը հետ, որ երկուքուկէս ամիս առաջ Սուրէնի գործի համար զիւզերը գտնուած միջոցին համազգի Հապիպ անուն երիտասարդի մը հետ փախած է: Կրօն. ժողովը քննութեամբ հաստատած է Քէֆայի ցփակեցութիւնը :

Սուրէնը վեցամեայ ապաշխարութեան կ'ենթարկուի, որ օտարացեղ ալրի մը հետ պսակուած է: Կ'արգելուի ասկից ետքը օտարի հետ ամուսնութիւնը :

22. Մայիս 25.— Եօզղատցի Մարի Թրֆէնկճեան՝ կ'ամբաստանէ իր երկը, Մամուէլ Դարիպեանը Պոր երկար ատեն զինքը և զաւակները լքելով, երուսազէմի կողմերը օտար կիներու հետ կ'ապրի: Ռէմէլի Տեսուչ Գրիգոր Վարդապետ 1920 Մայիս 6 գրութեամբ կը հաստատէ Մամուէլի անուղղայ և եպերելի կեանքը. ցփ, արբեցող և խառնակեաց Մամուէլի կինը Թագուհին՝ Ստեգի Քէլ-Կարապետեանի հետ փա-

խած է :

Ամուսնալուծուելով, կ'արժանանայ Մամուէլի վերամուսնութիւնը և Եկեղեցոյ հազարակցութենէն կը զրկուին Թագուհին և հոմանին :

23. Մայիս 25.— Կեսարացի 30 ամեայ Թագուհի Փունարճեան, ի Դամասկոս, 1911 ին ամուսնացած է Եօզղատցի Տրգրան Փունարճեանի հետ, որ յետ եռամեայ կենակցութեան, կնոջը արժէքաւոր զարգերը յափշտակելով Սելանիկ կ'երթայ և անբարեխղճ անձանց իրրե ալրի հաւատացնելով, 1922 Նոյ. 21 ին կը պսակուի Փերուզ Աւագեանի հետ :

Կ'արժանանայ վերամուսնութիւնը :

24. Մայիս 25.— Ատանացի Ովսաննա 23 ամեայ ամուսնացած է համաքաղաքացի Մանուկ Չիւնկիւլեանի հետ, որ առաջ թրքուհիի մը հետ խառնակեցութեամբ կ'ապրի եղեր և ութը տարի առաջ լքելով Ովսաննան՝ Կիպրոս գնացեր է թրքուհիին հետ :

Ամուսնալուծուելով Մանուկի և Ովսաննայի ամուսնութիւնը, կ'արժանանայ վերամուսնութիւնը :

25. Մայիս 29.— Ըստ յայտարարութեան Տիկին Շուշան Գլըճեանի, փառաւոր հանգէտով պսակուած են Տօքթօր Ներսէսին հետ: Քսանամեայ բաժանու մը յառաջ եկած է՝ Տօքթօրին Ալէքսանտրէթը ձգել հեռանալէն: Քանիցս խնդրած է միասին ապրիլ, և մերժուած է: Տիկին Շուշան ռուհնի է, «երկնաւորով պարապող»։ Տօքթօրն գրաւորապէս ապահովելու է որ կողմուելիք ընտանեկան բոյնը խառնարան մը պիտի չ'ըլլայ. պահձուի մը կենակցութեան մասին ալ գրաւոր ներողութիւն խնդրելու է :

26. Յունիս 22.— Այնթէպի Եագուզ Սրմապը-

երգեան ամուսնացած է 1921 ին, ի Բիլլա, Այնթէպցի  
Լուսիա Յարութիւն Աւետիսեանի հետ, որ տարազը-  
րութեան ատեն Գամասկոսի Գոնէթրա չէր քէզաբնակ  
դիւզին մէջ չէր քէզ երիտասարդի մը հետ փորձու-  
թեան մէջ կ'իյնայ, Պէյրութի քէմբին մէջ ալ Այնթէպ-  
ցի համալ Նազարի հետ կը խառնակի:

Եագուպ բողոքելով Լուսիայի անբարոյութեան  
դէմ ամուսնալուծում կը պահանջէ:

27. Յունիս 22.— Կարնեցի Ոսկան Մկրտիչեան,  
25 ամեայ, ամուսնացած է համաքաղաքացի 20 ամ-  
եայ Իւզաբեր Աթոռակալեանի հետ. բայց առաջին օ-  
րէն անհամաձայնութիւնը կ'սկսի Ոսկանի յիմարական  
ամբաստանութեամբ: Կրօն. ժողովը մէկ տարի բա-  
ժան ապրելու որոշումով նպատակին կը հասնի. Ոս-  
կան զգաստացեալ, կը խոստովանի իր զրգարտու-  
թիւնը. Իւզաբեր պատույ վիրաւորանք համարելով,  
չ'ուզեր կենակցիլ Ոսկանի հետ:

Ոսկան և Իւզաբեր միամեայ ապաշխարութեան  
կ'ենթարկուին:

28. Յունիս 23.— Մարտիրոս Թորիկեանի և կնոջ  
Հայկանուչի խնդրոյն քննութեամբ հաստատուած է  
Մարտիրոսի գինովութեան հետեանօք գաժան ըն-  
թացքը եւ քանիցս իր կինը սպաննելու փորձը պար-  
տաւորած են ամուսնալուծել: Զգաստանալով, ուխ-  
տած է հրաժարիլ եպերելի կեանքէն և քրոջը հետ  
կ'ապրի իր արհեստով: Յարգելով եղած միջնորդու-  
թիւնը, հայրաբար ներելով կ'արսունեմ ամուսնու-  
թիւնը, ստորագրելով խոստմնագիր մը, չի վերադառ-  
նալու անպատիւ և կեղտոտ կեանքին:

29. Յունիս 30.— Եդեսացի Մարի Տատանեան,  
քանիցս ամուսնոյն Սարգիսի գինովութեան պատճա-

ռաւ իր և զաւակաց կարօտ և անխնամ վիճակը յա-  
ռաջ բերելով, պատշաճ տնօրինութիւն կը խնդրէ:  
Կրօն. ժողովը երկիցս Ալէքսանտրէթ զրկած է երկան  
միանալու և մերժուած է և բարեսէրներու նպատակով  
հազիւ կարողացած է ի Հալէպ մօրը քով վերադառ-  
նալ:

Լուծուելով Սարգսի և Մարիի ամուսնութիւնը,  
կ'արսունի Մարին վերամուսնութիւնը և Սարգիսը  
բարե արբեցող և անկարող ընտանիք պահելու՝ կը  
չրկուի:

30. Յունիս 30.— Այնթէպցի Տիկին Մարիամի և  
Գրիգոր Տէմիրճեանի ամուսնալուծումը տարի մը ա-  
ռաջ տեղի ունեցած է. արձանագրուած չէր. Հալէպէն  
պատճէնը ուզուեցաւ:

31. Յունիս 30.— Լճեցի Սեդրաք Ալէքսանեան  
Տիգրանակերտցի Վիքթորիա Փինէճեանի հետ 13 տա-  
րի ամուսնացած է Տիգրանակերտի մէջ: Բռնա-  
դաղթի ժամանակ թիւրքերէն կը տարուի և ցարգ կը  
մնայ Ապսիւլ Բազաք թիւրքին մօտ, որմէ երկու  
զաւակ ունեցած է, և ըստ յայտարարութեան Վիքթո-  
րիայի մօրը, նիքեահեղած է և վերադարձը անկարելի:

Լուծուելով Սեդրաքի և Վիքթորիայի ամուսնու-  
թիւնը, կ'արսունի Սեդրաքի վերամուսնութիւնը:

32. Յունիս 30.— Եդեսացի Յակոբ Գատիֆեան  
յետ զինազագարի պսակուած է Սեբաստացի Վարուկ  
Մխիթարեանի հետ՝ ձեռամբ հին Ասորի քահանայի:  
Հալէպ փոխադրուելէ ետքը յարաբերութեան կը մտնէ  
Պրիւքսէլ գտնուող Կարապետ Գարաքէհեան հարուստ  
ազգականին հետ, որուն ծախքով Պրիւքսէլ գնացեր և  
վերադառնալ չ'ուզեր:

Լուծուելով Յակոբի և Վարուկի ամուսնութիւնը, կ'արտօնեմք Յակոբի վերամուսնութիւնը և Վարուկը կը զրկենք իբրև ուխտագրուած:

33. Յուլիս 2.— Մալաթիա, հակառակ քրիստոնէական սիրոյ և համերաշխութեան, կաթողիկե եղբայրները՝ Մալաթիացի Պլլամեանը վաստակած են պսակելով Խաչատուրը որբուհի Վարդանուշի հետ:

34. Յուլիս 13.— Վարդօցի էսմէրը հաճութեամբ պսակուած է Սըլլընացի կարապետ Յարութիւնեանի հետ, և հակառակ ուխտին, փախած է ընտանեկան յարկը լքելով:

Լուծուելով կարապետի և էսմէրի ամուսնութիւնը, կ'արտօնուի կարապետի վերամուսնութիւնը:

35. Յուլիս 13.— Բիլիսցի Յովհաննէս Թէմամեան և յոյն օրթոտօքս ամուսնոյն Մարթայի երկարատեանէ ի վեր կազ ու կռիւը շղթայ մը եղած է: Վերջին անգամ Յովհաննէսի հրաւերին վրայ՝ Խուրի Միլսայէլի հետ Առաջնորդարան կը ներկայանան, ուր Յովհաննէս ամուսնալուծուած կը խնդրէ:

Լուծելով Յովհաննէսի և Մարթայի ամուսնութիւնը, կ'արտօնեմք Յովհաննէսի վերամուսնութիւնը:

36. Յուլիս 13.— Տարէնտէցի Յովհաննէս Վարդանեան իր կինը Մարաչցի Ովսաննա Վարդանեանը հինգ տարիներէ ի վեր լքած և անյայտացած է:

Լուծուելով Յովհաննէսի և Ովսաննայի ամուսնութիւնը, կ'արտօնուի Ովսաննայի վերամուսնութիւնը:

37. Յուլիս 18.— Ատանացի Պօղոս Պօյաճեանի կինը, որ ըստ Սայտայի Հոգ. Ներկայացուցիչ Տ. Արսէն Վրդ. ի 1924 Հոկտ. 29 գրութեան, երիտասարդի մը հետ փախած էր: Կրօն. Ժողովը լսած էր Մալաթիայի յայտարարութիւնը՝ թէ չի սիրեր Պօղոսը: Ի

զգաստութիւն, առժամեայ կը բաժնէ և Մարիճան Տ. Վահանի պաշտպանութեան կը յանձնուի, ուրկէ փախչելով խառնակեցութեան կ'սկսի:

Լուծուելով Պօղոսի և Մարիճայի ամուսնութիւնը, կ'արտօնուի Պօղոսի վերամուսնութիւնը:

38. Յուլիս 13.— Ատանացի Մարիճա Պոյաճեանի այլը Ասորի Թումա՝ զինով, խաղամու և ընտանեկան հաւատարմութեան անտարբեր, երեք ու կէս տարիէ ի վեր լքելով կինը և քառամեայ աղջիկը, անյայտացած է: Եղած քննութիւններով չի կարողացան հետքը գտնել: Մարիճա եղբօրը հետ Ամերիկա երթալու առթիւ ամուսնալուծուած կը խնդրէ:

Լուծուելով Թումայի և Մարիճայի ամուսնութիւնը, կ'արտօնուի Մարիճայի վերամուսնութիւնը:

39. Յուլիս 13.— Այնթէպցի Հաճի Առաքել Տէմիրճեանի կինը Վերոնիքա, ծնեալ Անտոնեան, կը բողոքէ թէ՛ էրիկը երկարատեան զինքը լքած է: Իբրեւ թէ 1900 ին Դամասկոսի մէջ պսակուած են: Վերոնիքայի այս յայտարարութիւնը չի հաստատուիր՝ ո՛չ Դամասկոսի Տեսչէն և ո՛չ ալ Ատանայի երբեմնի Հոգևոր Իշխանութեանէն:

40. Յուլիս 13.— Հալէպցի սափրիչ Առաքել Տօտիկեանը տարի մը առաջ պսակուած է Սաթենիկի հետ: Ընտանեկան անհամաձայնութիւնը բառնալու համար՝ կրօն. Ժողովոյ ջանքերը ապարդիւն կը մնան: Վեցամսեայ բաժանման կ'ենթարկուին, և այս միջոցին Սաթենիկ վառնա գտնուող իր եղբօրը հետ թղթակցելով կը մեկնի եղբօրը քով:

41. Յուլիս 13.— Պէնէսնիցի Գրիգոր Չիլինկիրպաչեանը անբարոյ կեանքով շատերուն հետ սիրաբանելով և կենակցելով՝ իբրև մետասաներորդ կին՝ Մալիամ Գուլազարգեանի հետ ամուսնացած է ութը տա-

րի առաջ և լքելով անյայտացած է:

Լուծուելով Գրիգորի և Մարիամի ամուսնութիւնը, կ'արժանանայ Մարիամի վերամուսնութիւնը:

42. Յուլիս 13.— Բագայի Թաղ. Խորհուրդը Հալէպի կրօն. ժողովին գիտելու պէտք չունէր՝ վարդանուշ Թէրզեանի ամուսնութեան առթիւ: Եթէ յիմարար սպառնալիք կ'ընեն օտարին գիտել, ազատեն. բայց եկեղեցւոյ հաղորդակցութենէ կը վտարուին և ամուսնական խնդիրները նկատի պիտի չառնուին:

43. Յուլիս 13.— Կէմէրէկցի Ռնոփրիոս Տ. Յակոբեանի կինը Արաքսի, տարագրութեան ատեն կը դժկամակի հետեւի իր էրկան՝ խոստումով որ յետոյ կը միանայ իրեն. սակայն հակառակ Ռնոփրիոսի ջանքերուն խոստումը չը կատարեր և թիւրքի մը հետ սիրային յարաբերութեան կ'սկսի:

Լուծուելով Ռնոփրիոսի և Արաքսիի ամուսնութիւնը, կ'արժանանայ Ռնոփրիոսի վերամուսնութիւնը և Արաքսին կը զրկուի Եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

44. Յուլիս 13.— Պօղոս-Յովհաննէս Թաշճեանի վերամուսնութիւնը բացառապէս կ'արժանանայ Պսակողք փոխանակ զգաստութեան հետեւիւ՝ թուղ մտքի, սրտի, տրամաբանական օրէնքին հետեւին: Կուրօրէն իր բախտը կապեր է ծերութեան, որուն նախադուռը հասած է:

45. Օգոստ. 7.— Այնթէպցի Խորէն Նազարէթեան ամէնօրեայ գինովութեամբ և թիւրք հոմանիի մը հայրենի ժառանգ կալուածի մը վաճառմամբ շրուայելը և իր զեռտի կնոջ Հերմինէ Թօփճեանի ամէնօրեայ նախատինքով և արհամարհանքով նահատակուելը պարտաւորեց ամուսնալուծում խնդրել:

Լուծուելով ամուսնութիւնը, Հերմինէի վերա-

մուսնութիւնը արժանանալու:

46 Օգոստ. 7.— Տիգրանակերացի Գրիգոր Ազատեան, անկարողութեան ի դարման վեցամսեայ պայմանաժամին լրման երեք մասնազէտ Տօքթօրներ՝ Գարլօ, Միսիճեան և Չաւուշեան հաստատած և վկայած են որ Գրիգորի տկարութիւնը անդարմանելի է: Գրիգոր մէկուկէս տարի առաջ ծածկելով իր տկարութիւնը՝ ամուսնացած էր Կեսարացի 21 ամեայ Մարիամի հետ:

Լուծուելով Գրիգորի և Մարիամի ամուսնութիւնը, կ'արժանանայ Մարիամի վերամուսնութիւնը:

Գեր. Մամբէ Ծ. Վրդ. Սիրուհեանի Համար 291  
և Յուլիս 24 նամակ:

47. Օգոստ. 7.— Տօքթօր Ն. Գլըճեանի աւերակ տունը վերականգնել գժուարին է, աւելի գժուարացուցեր է հոմանիի մը հետ անպակ ապրիլը և զաւակներ ունենալը, վերամիութիւնն առաջին կնոջ հետ անկարելի ըլլալով:

Լուծուելով կ'արժանանայ Տօքթօրին վերամուսնութիւնը:

Հայեպի կրօն. Ժողովոյ և Յուլիս 925  
Համար Տեղեկագիր

48. Սեպտ. 29.— Եղեսացի Ֆէրիտէի այլը Գէորգ Գարանըքեան խաղամուլ և զինարբու, յաճախ ընտանեկան բոյնը լքելով անհանդուրժելի վիճակ մը ստեղծած է, կրօն. ժողովոյ աշխատանքը ապարդիւն թողլով և տարիէ ի վեր կը բացակայի քաղաքէն և ոմանց հաւաստեօք Եղեսիա վերադարձեր է, նկատելով Ֆէրիտէի անպաշտպան կացութիւնը:

Լուծուելով ամուսնութիւնը, կ'արժանանայ Ֆէրիտէի վերամուսնութիւնը և Գէորգը կը զրկուի:

49. Սեպտ. 19.— Մշեցի Սուրէն Ոսկերիչեան, զանազան շահատակութիւններէ վերջը, տարի մը առաջ Յունաստանէն Հալէպ կուգայ և կ'ամուսնանայ Մարաշցի էլմաստ Ալլահվէրտիեանի հետ: Երուողէմ երթալու պատրուակաւ Գամասկոս կ'երթայ և կ'ինը հոն թողլով կ'անյայտանայ: Կրօն. Ժողովը չէ գիտցած ուր բլալը, մինչդեռ իր հայրենակիցները կը հաստատեն Սուրէնի ո'չ միայն յոռի նկարագիրը այլ նաև էլմաստի չորրորդ կ'ինը բլալը:

Լուծուելով էլմաստի և Սուրէնի ամուսնութիւնը, կ'արսօնուի էլմաստի վերամուսնութիւնը և Սուրէնը կը զրկուի թէ՛ վերամուսնութենէ և թէ՛ Եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

50. Սեպտ. 19.— Զէյթունցի Կարապետ Թօփալեան մէկ տարի առաջ կ'ամուսնանայ համաքաղաքացի 38-44 ամեայ Զարման Կէօփօղլեանի հետ: Զարման Կարապետի առնականութենէ զուրկ բլալը խնդրագրով կը յայտնէ, զոր Կարապետն ալ կը խոստովանի:

Լուծուելով Կարապետի և Զարմանի տպօրինի ամուսնութիւնը, կ'արսօնուի Զարմանի վերամուսնութիւնը:

51. Սեպտ. 19.— Հայնեցի Հայկանուչ-Յովհաննէս Սարգսեան յայտնելով թէ Յովհաննէս-Աղեքսանդր Սարգսեանի հետ ամուսնացած է, որ Պալքանեան պատերազմին զինուոր երթալով անյայտացած է և վերջերս էջմիածնի Եղուարդ գիւղին մէջ կ'նոջ մը հետ կ'ապրի պտակեալ կամ անպտակ:

52. Սեպտ. 19.— Կեսարացի Կարապետ Տէմիրճիեան պտակուած է Ատանայի մէջ Տիգրանուհի Ժամկոչեանի հետ, որ անբարոյ կեանքով ի Հալէպ մեղան-

չած է իր ուխտին և մեղապարտ յարաբերութիւնը շարունակած է զանազաններու հետ:

Լուծուելով Կարապետի և Տիգրանուհիի ամուսնութիւնը, կ'արսօնուի Կարապետի վերամուսնութիւնը և Տիգրանուհին կը զրկուի վերամուսնութենէն և Եկեղեցւոյ հաղորդակցութենէն իբրև ցոփակեաց:

53. Սեպտ. 19.— Վանեցի Լեոն Կիւլմէղեան էսկիչէհիբի մէջ ամուսնացած է Պայժառ Մարկոսեանի հետ, որ Յունական Արշաւանքին յոյն զինուորի մը յանցապարտ յարաբերութեամբ կը կապուի և Յունաստան կ'երթայ:

Լուծուելով Լեոնի և Պայժառի ամուսնութիւնը, կ'արսօնուի Լեոնի վերամուսնութիւնը:

54. Հոկտ. 8.— Տիգրանակերտցի Յովսէփ Զատըրճեան ի Պէյրութ 1910 ին պտակուած է Քիլիսցի Մարին հետ, որ օգտուելով Յովսէփի զինուորական ծառայութենէն, մօրը խառնակեաց կեանքը շարունակած է ի Հալէպ, ի Գամասկոս և ի Պէյրութ և այժմ կը գտնուի հանրատան մէջ:

Լուծուելով Յովսէփի և Մարին ամուսնութիւնը, արսօնուած է Յովսէփի վերամուսնութիւնը և Մարին իբրև հանրակին՝ զրկուած է Եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

55. Հոկտ. 8.— Ատանացի Մարտիրոս Էսկիճեան և Զօմազուլիցի Յարութիւն Էլիկիճիկեանի ամուսնական խնդիրները նկատի առնելով, պատշաճ անօրինութիւնը կը հաղորդենք:

56. Հոկտ. 8.— Սսեցի Գրիգոր Գուլումճեանի կ'ինը Ատանացի Արմէնուհի Վայփայեան ամիսներէ ի վեր ապօրինի կը յարաբերուի Սսեցի Աշոտ Ատուրեանի հետ: Մերձաւորներու և ծանօթներու երկար հետա-

պընդունութեամբ կը բռնուի Աշոտի հետ մեղապարտ յարաբերութեան մէջ:

Լուծուելով Գրիգորի և Արմէնուհիի ամուսնութիւնը, կը հրամայուի բաժան ապրիլ: Գրիգոր թերացած է, որ կանուխէն չէ կռահեր կնոջ անհաւատարմութիւնը:

57. Հոկտ. 8.— Ի Գրըգ-խան, երիտասարդը, որ կ'ուզէ ամուսնանալ իր խորթ մօր նախկին ամուսինէն ունեցած աղջկան հետ:

Կ'արսօնուի ամուսնութիւնը, որովհետև արեւակցական ուէ կապակցութիւն չունին:

58. Հոկտ. 8.— Անտիոքցի Մարիամ Աբգարեանի ամուսինը Պիրէճիկցի Պէշիր Արիֆ, ընտանեկան յարկը լքելով խոյս տուած է հետապնդումներէ և Հարէմի մէջ ուրիշ կնկան մը հետ ամուսնացած է, բայց դուրսէն անտարբեր դատապարտուած է եւամեայ բանտարկութեան:

Լուծուելով Պէշիրի և Մարիամի ամուսնութիւնը, կ'արսօնուի Մարիամի վերամուսնութիւնը, պայմանաւ որ առնելիքը նոյն Եկեղեցւոյ զաւակ ըլլայ:

59. Հոկտ. 23.— Բերնի դարչահոտութիւնը էրկան կամ կնկան, բժշկական քննութեան ենթարկել, բժշկելի կամ անբուժելի ըլլալը ստուգելու և ըստ այնմ տնօրինելու համար:

60. Հոկտ. 23.— Եալազաէրէցի Գարեգինի և ամուսնոյն Լուսիկ Գալայճեանի խնդրոյն մէջ Լուսիկ յանցաւոր է ընտանեկան յարկը լքելուն և ապօրինի յարաբերութիւն ընելուն համար:

Լուծելով Գարեգինի և Լուսիկի ամուսնութիւնը, եթէ Կրօն. Ժողովը կ'երաշխաւորէ զբաւորապէս, Գարեգինի վերամուսնութիւնը կ'արսօնուի:

61. Հոկտ. 30.— Գարամանցի Կարապետ Վարդանեանի կինը Սառա, ծնեալ Այվազեան, հակառակ ուխտին և ընտանեկան սրբութեան, հանրատան ապականութեան մէջ կը տապալակի: Հակառակ Կրօն. Ժողովոյ ջանքերուն, որով Ազգ. Պատասպարան գրուած էր, փախչելով կրկին հանրատուն մտած է:

Լուծուելով Կարապետի և Սառայի ամուսնութիւնը, Կարապետի վերամուսնութիւնը կ'արսօնուի և Սառան կը զրկուի Եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

62. Հոկտ. 30.— Չնքուչցի Սիմոն Տէգլինեանի կինը Անուշ Բէշիշեան, իր անբարոյ քրոջ հետեւելով, էրկան խաղաղասիրական ոգւոյն անսաստելով, շարունակած է խառնակցութիւնը:

Լուծուելով Սիմոնի և Անուշի ամուսնութիւնը, կ'արսօնուի Սիմոնի վերամուսնութիւնը և Անուշը կը զրկուի, որպէսզի երկրորդ մը չանբախտացնէ:

63 Հոկտ. 30.— Քիլիսցի Աստուր Պօյաճեանի կինը Կատար Ապահան՝ էրկան պաշտօնով բացակայութենէն օգտուելով ի վաղուց անտի յոյն կաթողիկ ձըրճի Նաումեանի հետ մեղապարտ յարաբերութեան մէջ գտնուած է, և վերջերս ալ անյայտացած են:

Լուծուելով Աստուրին և Կատարին ամուսնութիւնը, կ'արսօնուի Աստուրին վերամուսնութիւնը եւ Կատար կը զրկուի Եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

64. Նոյ. 9.— Հալէպցի Պէշիր Լճպայիաի անբարոյ կեանքը հաստատուած է. ուղղութեան բերելու ջանքերը ապարդիւն մնացեր են. այժմ իր հովանիին հետ Գամասկոս ապստանած է հետապնդումներէ զերծ մնալու համար:

Լուծուելով Պէշիրի և կնոջ ամուսնութիւնը, կ'արսօնուի կնոջ վերամուսնութիւնը:

79-65559



65. Նոյ. 9.— Խարբերդի Հապուսի գիւղէն Վարդան Կարօյեան 12 տարի առաջ Ամերիկա եղած ատեն իր կինը Մասիկ՝ սիրային յարաբերութիւն կ'ունենայ երիտասարդի մը հետ: Վարդան աններող ոգւով մերժած է Մասիկը: Մասիկը անպաշտպանութենէ և կարօտութենէ ազատելու համար՝

Լուծուելով Վարդանի և Մասիկի ամուսնութիւնը, կ'արժանանայ երկուքին ալ վերամուսնութիւնը:

66. Նոյ. 9.— Տ. Մկրտիչ Քահանայ Մուրատեան ի Մէսքէնէ 28 ամեայ Արօ Սաչիկեանը փոխանակ Տիգրանակերտցի 15 ամեայ Մարիամ որբին հետ պսակելու, Սասունցի երկիրցս ալիւսացած 50-54 ամեայ Խաթունի հետ կը պսակէ: Քահանան եռամսեայ ապաշխարանքի կ'ենթարկուի:

Արօն կոյր ըլլալու է որ մօրը հասակակից, երկու երկան գլուխը կերած Խաթունին հետ պսակուելու կը յօժարի:

Պսակը անվաւեր համարելով, Արօն միամեայ ապաշխարանքի կ'ենթարկուի, իսկ Խաթունը կը զրկենք վերամուսնութենէ:

67. Գեկտ. 5.— Ատանացի Սարգիս Պաճագսըզեան 7 ամիս առաջ պսակուած է Պուրսացի Տիկին Սիրանուշ Բահանեանի հետ: Սիրանուշ, հակառակ հաւատարմական ուխտին, ընտանեկան բոյնը թողլով քրքիտոնեայ արաբներու քով, սպասուհիութեան մը տամ, ապօրէն յարաբերութեան սկսած է արաբ երիտասարդներու, ի մասնաւորի թիւրք երիտասարդի մը հետ:

Լուծուելով Սարգսի և Սիրանուշի ամուսնութիւնը, կ'արժանանայ Սարգսի վերամուսնութիւնը, իսկ Սիրա-

նուշ իբրև խառնակեաց կը զրկուի:

68. Գեկտ. 24.— Այնթէպցի Եագուպ Սրմապըլըզեան աններող ոգւով կնոջ Լուսիա Աւետիսեանի մեղանշուժը առարկելով՝ չը յօժարի վերամիանալ և Լուսիա պարկեշտ կեանքով մօրը քով կը մնայ:


Լուծուելով Եագուպի և Լուսիայի ամուսնութիւնը, կ'արժանանայ Լուսիայի վերամուսնութիւնը. իսկ Եագուպ 27 ամեայ վաւուռն երիտասարդ մըն է, բայց մանկամարդ կ'ընր լքելով ընտանեկան բոյն կազմելու հաւանականութենէ զուրկ է, և մինչև պարկեշտ կենցաղավարութիւն ունենալը թողուլ:

69. Գեկտ. 24.— Տ. Մկրտիչ, ի յարգանս Գեր. Առաջնորդի և Կրօն. Ժողովոյ միջնորդութեան, կը ներուի քահանայագործութիւնը շարունակելու՝ խոստումագիր ստորագրել տալով՝ նման թերութեանց մէջ չը գտնուելու համար:

70. Գեկտ. 24.— Սարգիս Տաւուշեան զինազարէն ի վեր անյայտացած է:

Այնթէպցի Միհրան Պալապանեան ձգելով ընտանիքը անխնամ, խոյս տուած է և զանազան տեղեր շուայտ կեանք մը կ'ապրի և Հայֆայի ու Աքեայի մէջ փորձեր ըրած է վերամուսնանալու:

Քանի որ 31 օրեայ պայմանաժամին՝ թէ Եագուպ և թէ Միհրան, մին ողջ ըլլալով և միւսն զգաստանալու նշաններ ցոյց տուած չեն՝ երկուքն ալ կ'ամուսնալուծուին և Վարդուհի Տաւուշեանի և Սիրանուշ Պալապանեանի վերամուսնութիւնը կ'արժանանայ և Միհրանը կը զրկուի:



1926

1. Յուն. 22.— Պալլքէսիրցի Մարիամ, 24 ամեայ, խարէութեան զոհ եղած է՝ երեք տարի առաջ պսակուելով Ատանացի Պօղոս կամ Պոտոս անձին հետ, շրուն ոչ միայն յունական ծագումը, նաև առնականութենէ զուրկ ըլլալը և Մարիամի կուսութեան պահպանումը հաստատուած է: Պսակը ըստ օրինի անվաւեր համարելով՝ կ'արժանաւորուի Վերամուսնութիւնը:

2. Փետր. 1.— Եղեսացի Էլմաս Թաշճեանի էրկը կը Յովհաննէս Թաշճեան՝ տարագրութեան շրջանին կարծելով որ կինը մեռած է Եդեսիոյ մէջ, կը պսակուի. այժմ երեք զաւակաց տէր՝ կ'ապրի ի Թրիփօլի և չուզեր վերագոհնալ առաջին կնոջ:

Կ'արժանաւորուի Էլմասի վերամուսնութիւնը:

3. Փետր.— Սիվրիհիսարցի 24 ամեայ Բիւզանդ Թորգոտեանի հետ կ'ամուսնանայ Կեսարացի 16 ամեայ Սիրանուշ, երկուքուկէս տարի առաջ. անցեալ տարւոյ Օգոստոսէն սկսեալ զիրար կ'ամբաստանեն՝ իբրև անհաւատարիմ իրենց ուխտին: Պատ. Կրօն. Ժողովը կը կախակայէ ի զգաստութիւն և ի հաշտութիւն, բայց Սիրանոյշ իր խառնակեաց երկու քոյրերուն հետ ցոփակեցութիւնը կը շարունակէ:

Կ'արժանաւորուի Բիւզանդի վերամուսնութիւնը և Սիրանուշը կը զրկուի Եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

4. Փետր. 8.— Պոլսեցի Հայկ Կարապետեանի հետ վեց տարի առաջ ի Պէլլութ կ'ամուսնանայ Եւզոկիացի Զապէլ Թիւթիւնճեան: Հայկ անբարոյ, կըոււտէր, ծոյլ և ընտանեկան պատիւը ոտնակոխող բընաւորութեամբ չափազանց կը դառնացնէ շուրջինները: Զգաստացնելու փորձերը ապարդիւն կը մնան: Ամուսնութենէն վեց ամիս յետոյ կ'արտաքսուի Պէլլութէն և ս'եր ըլլալը անյայտ է:

Լուծուելով Հայկի և Զապէլի ամուսնութիւնը, կ'արժանաւորուի Զապէլի վերամուսնութիւնը և Հայկը կը զրկուի:

5. Փետր. 9.— Յընտըճաքցի 26 ամեայ Յովսէփ Գարրիէլեան 1923ին, ի Գամասկոս, կ'ամուսնանայ Զէյթունցի 30 ամեայ Հայկանոյշ Պլատիկեանի հետ, որ իբրև անբարոյ և խառնակեաց ամբաստանուելով Յովսէփէն, հաստատուած է քննութեամբ զանազաններու հետ խառնակեցութիւնը: Յովսէփ խառնակեցութենէ զատ՝ ամուսնութիւնը և տարիքի մեծութիւնը պատճառաբանելով՝ ամուսնալուծում և վերամուսնութիւն կը խնդրէ:

Լուծուելով Յովսէփի և Հայկանոյշի ամուսնութիւնը, կ'արժանաւորուի Յովսէփի վերամուսնութիւնը և Հայկանոյշը կը զրկուի:

6. Փետր. 24.— Ատանացի Արամ Գասապեան 30 ամեայ, 1924 Հոկտ. 2ին պսակուած է ի Պէլլութ Բիւլիոցի Վարգուհի Մաճառեանի հետ 18 ամեայ: Վարգուհին հօրաքրոջ մահուան առթիւ Ալէքսանարէթ կ'երթայ և Արամ ալ գրաւորապէս կը խոտանայ ինքն ալ երթալ: Յատենի կրօն. Ժողովոյ Արամէն կ'ամբաստանուի իբրև խառնակեաց և կը հաստատուի արժանահաւատ անձանց վկայութեամբ:

Լուծուելով Արամի և Վարդուհիի ամուսնութիւնը, կ'արտօնուի Արամի վերամուսնութիւնը և Վարդուհին կը զրկուի Եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

7. Մարտ 23. — Գոնիայի էրէյիէն Աբրահամ Շաղաքեանի կինը Արմաւենի, ծնած Մասթարեան, Անատոլուի վերջին պարպումին, մնացած է Գոնիա և Աբրահամ Խարբերդ, կամ այլուր աքսորուելով յարաբերութիւններն խզուած է, և Արմաւենի այս ցաւալի պարտգայէն օգտուելով՝ խառնակեցութեան կ'սկսի: Հակառակ թելադրուած և գործադրուած միջոցներու, ցարդ կը մնայ ի Գոնեա և կը շարունակէ անպարկեշտ կեանքը:

Լուծուելով Աբրահամի և Արմաւենիի ամուսնութիւնը, կ'արտօնուի Աբրահամի վերամուսնութիւնը և Արմաւենին կը զրկուի:

8. Մարտ 23. — Տալուրիկցի Յարութիւն Յակոբեանի կնոջ՝ Բիլիսցի Մարիամի անհամաձայնութիւնը երեք տարի առաջ սկսած է: Զիրար կ'ամբաստանեն իրրև արտաժարակ: Բժշկական քննութիւնք կը հաստատեն երկուքին ալ ջերմամիզական արտաբանայ կախակայութենէ ետքը առողջական վիճակներն ճշգրտած չէ. թողուլ իրենց կացութեան մէջ:

9. Մարտ 23. — Մարաշցի Եփրեմ Ազատեանի կինը Խաթուն՝ յօժարակամ բաժնուելու տրամադրուած են՝ կնոջ սեռային գործարանաց անզոյութեան պատճառաւ:

Լուծուելով Եփրեմի և Խաթունի ամուսնութիւնը, կ'արտօնուի Եփրեմի վերամուսնութիւնը, պայմանաւ որ առնելէքը ըլլայ Հայ Եկեղեցւոյ զաւակ և տարիքը համաձայն Եփրեմի տարիքին:

10. Մարտ 23. Հալէպցի Սափրիչ Առաքելին կինը Սաթենիկը յորգորել վերագառնալու, հակառակ պարագային պէտք եղած ազգարարութիւնը ընել՝ ըլլալէք անօրինութեան մասին:

11. Մարտ 23. — Զէյթունցի Ասատուր Վարդանեանի մասին հրամայուած քննութեան արդիւնքն է. Ասատուր ուէ մէկուն նշանուած չէ. ընտանիքը լքելը կը խոստովանի և վերամուսնանալու թէև դժկամակ, եղած յորգորներուն վրայ խոստացած է իր այրական և առնական պարտականութիւնը կատարել և առած աննշան ամսականէն մաս մը խնայել և իրեններուն զրկել:

12. Մարտ 29. — Մարաշցի 26 ամեայ Նազար Մարգարեան կ'ամբաստանէ իր կինը 30 ամեայ Ֆէրիտէն՝ իրրև խառնակեաց ի Դամասկոս և ի Պէյրութ: Կրօն. ժողովը քննութեամբ Տ. Աւետիս Հաչինեանի, կըրկնակ տեղեկագիրներով կը հաստատէ Ֆէրիտէի խառնակեցութիւնը և Մարաշցի Յարութիւն Սէֆէրեանի հետ խոյս տալով անյայտանալը:

Լուծուելով Նազարի և Ֆէրիտէի ամուսնութիւնը, կ'արտօնուի Նազարի վերամուսնութիւնը և Ֆէրիտէն կը զրկուի Եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

13. Մարտ 29. — Ատանայի Տիկին Մարիամ Չերչեան կ'ամբաստանէ իր ամուսինը Ստեփան Չերչեանը, որ լքած է Մարիամը և զաւակները զբաւած: Կրօն. ժողովը աչխատած է խնդիրը հաշտութեամբ վերջացնել, որուն երբեմն Մարիամ յօժարած է, հակառակ Ստեփանի չկամութեան, երբեմն ալ Ստեփան յօժարած է և կինը հակառակած. մանաւանդ կնոջ անկարելի եղած է վերագործը:

Լուծելով Ստեփանի և Մարիամի ամուսնութիւնը, երկուքն ալ կը զրկենք վերամուսնութեան իրաւունքէն:

14. Մարտ 29 Ամերիկայէն հասած տեղեկութիւնք կը հաստատեն վալանթինի իր ամուսնը՝ Մարտիրոս Էրէճեանը՝ մեռեալ հոչակելով ամուսնանալը:

Լուծելով Մարտիրոսի և վալանթինի ամուսնութիւնը, կ'արսօնեմք Մարտիրոսի վերամուսնութիւնը:

15. Ապրիլ 1. — Մարաշցի 45 ամեայ Փանոս Պէթելեան 1900ին ամուսնանալով համաքաղաքայի 40 ամեայ Մարիցայի հետ, երկու զաւակ կ'ունենան: Մաւրաշի աննախընթաց ջարդին Փանոս Ատանա փախչելով, իբրև թէ Մարիցան մեռած է, կ'ամուսնանայ Աքսէրայցի Լուսածինի հետ: Մարիձա մեռած չլլալով կը միանայ իր օրինաւոր էրկան:

Լուծելով Փանոսի և Լուսածինի ամուսնութիւնը, կ'արսօնեմք Լուսածինի վերամուսնութիւնը:

16. Մայիս 19. — Արապկիրցի Սաթենիկ փախնձեան՝ գիտնալով համաքաղաքացի Առաքել Տօնիկեանի երեք որբերու հայր ըլլալը և նիւթական աննախանձելի վիճակը, յօժարակամ կը պահուի հետը. սակաւօրեայ կենակցութեամբ կը մտնայ ամէն խոտուած և կը լքէ ընտանեկան յարկը ու ծառայութեան կը մտնէ: Ռուսնուդ եզրօր քով երթալու համար Պէյրութ կ'իջնէ ու կը մերժէ վերադառնալ:

Լուծելով Առաքելի և Սաթենիկի ամուսնութիւնը, կ'արսօնեմք Առաքելի վերամուսնութիւնը, պայմանաւոր առնելիքը ըլլայ գթօտ մայր մը որբերուն. իսկ Սաթենիկը կը զրկենք իբրև ուխտագրուած:

17. Մայիս 19. — Տալուրիկցի Յարութիւն Յակոբ-

եանի և կնոջ Բիլլուցի Մարիամի միջև, իրարու ախտավարակութեան կասկածանքով, ընտանեկան անհամաձայնութիւնը կարելի չըլլար բառնալ: Յարութիւն ըմբոստ բնաւորութեամբ համակերպած չէ իբրև սննդադրամ կնոջ և վեցամսեայ զաւակին ամսական մէկ սուկի վճարումին:

Լուծելով Յարութիւնի և Մարիի ամուսնութիւնը, կ'արսօնեմք Մարիամի վերամուսնութիւնը, եթէ առողջական վկայական առնէ. իսկ Յարութիւնը ապաշխարութեան կ'ենթարկենք մինչև կարողանայ իր մասին եղած տնօրինութեան անկեղծ համակերպութեան զբաւական ձեռք բերելը:

18. Մայիս 19. — Այնթէպցի Զէքիէ Միքայէլեան ընտանեկան անկարևոր պատճառներով ամուսնոյն՝ Պիլէճիկցի Յարութիւն Տ. Սահակեանի տունէն փախչելով նախկին հոմանիւն քով կ'երթայ, որ ամուսնալուծած էինք 1923 թ. դոստ. 4ին: Ի յարգանս կրօն. ժողովոյ հաւաստումին, թէ զլջացած է յիմար արարքներէն և ընտանեկան շրջանակի մէջ ժուժկալ և պարկեշտ ապրած է,

Կ'արսօնեմք ընդունիլ ի ծոց Մայրենի Եկեղեցւոյ և վերամուսնանալ:

19. Մայիս 19. — Լուծելով Պոլսեցի Կարպիս Պէրպէրեանի և Կիւրիւնցի երիցունի Զարուհիի ամուսնութիւնը, երկուքն ալ կը զրկենք վերամուսնութենէ:

20. Մայիս 19. — Սասունցի հացադործ Գէորգ Աւագեանի կինը Եղեռացի Մարիամ, որ քանիցս լքելով իր զաւակները, փախած է ի Պէյրութ, յոյն հոմանիւն քով:

Լուծելով Գէորգի և Մարիամի ամուսնութիւնը,

կ'արսօնեմք Գէորգի վերամուսնութիւնը և Մարիամը կը զրկենք իբրև անհաւատարիմ և ցոփակեաց:

21. Մայիս 19.— Կարնեցի Ոսկան Մկրտիչեան և կինը Իւզարեր յետ միամեայ առանձինն ապրելու պայմանին լրման՝ չեն համաձայնիր միասին ապրելու: Երկուքն ալ դատարկ խօսքերով որպէս թէ կ'ուզեն համակերպիլ, բայց գործնականապէս մա'նաւանդ կինը սաստիկ կ'ընդիմանայ:

Լուծելով Ոսկանի և Իւզարերի ամուսնութիւնը, կ'արսօնեմք Ոսկանի վերամուսնութիւնը և Իւզարերը կը զրկենք:

22. Մայիս 19.— Էօզէրլիցի կուսապիղծ Սարգիս Չէփէլեան, իր զոհին համազուգացի Նուրիցայի հետ բռնադատութեամբ կը պսակուի, բայց արժանապատուութիւնը փրկելու համար առանց առաջատարի կը փախչի Պաղտատի կողմերը:

Անասնաբար կոյս պղծել և արժանապատուութիւն փրկել ծայրագոյն խելագարութիւն է:

Լուծելով Սարգիսի և Նուրիցայի պսակը, կ'արսօնեմք Նուրիցայի վերամուսնութիւնը և Սարգիսը կը զրկենք որպէս սրիկայ:

23. Յունիս 10.— Վահկայի 30 ամեայ Պաղտատար Ճինպէլէկեան 1926 Մարտ 13 գրութեամբ կ'ամբաստանէ իր կինը Կեսարացի Սիրանոյշը՝ իբրև անհաւատարիմ և խառնակեաց: Պաղտատար ճամբու ծախք զրկած է Սիրանուշին որ Աթէնք գայ, իրեն քով: Սիրանոյշ զրկուած գրամբ կերած և չէ պատասխանած, և ցոփ կեանքը շարունակելով արիւնոտ դէպքերու առիթ տուած է:

Լուծելով Պաղտատարի և Սիրանոյշի ամուսնու-

թիւնը, կ'արսօնեմք Պաղտատարի վերամուսնութիւնը և Սիրանոյշը կը զրկենք իբրև ցոփակեաց:

24. Յունիս 10.— Միսիսցի 80 ամեայ Հապիպ Գրիգորեանը, որ 7 տարի առաջ ամուսնացած է Ապտօզուցի 25 ամեայ Եղիսաբէթի հետ, 1926 Ապրիլ 20 թուակիր խնդրագրով կ'ամբաստանէ իր կինը՝ իբրև անհաւատարիմ և Այնթէպցի Նազար Հէքիմեանի հետ կենակցող: Հապիպ նոյնիսկ ձերբակալած է և արժանահաւատ անձինք և Ապտօզուլի Հայր: Միութիւնը կը հաստատեն Եղիսաբէթի խառնակեցութիւնը:

Վերաքննութենէ ետքը կը թողունք պատշաճ տրնօրինութիւնը:

25. Յունիս 10.— Գարամանցի Բենիամին Շահինեան ամուսնացած է ի Գոնիա՝ Արաքսի Մաճառեանի հետ տարագրութեան ընթացքին: Արաքսի չէ ուզած ամուսնոյն հետ Գոնիա երթալ և միասին ապրիլ: Դամասկոսի մէջ նոյն ոգւով վարուած և շարունակած է անբարոյ կեանքը:

Լուծելով Բենիամինի և Արաքսիի ամուսնութիւնը կ'արսօնեմք Բենիամինի վերամուսնութիւնը, և Արաքսին կը զրկենք իբրև խառնակեաց:

26. Յունիս 10.— Խարբերդցի 25 ամեայ Պօղոս Յարութիւնեան և կինը Ատանացի 17 ամեայ Ազնիւ Ստամպօլեան գիրար կ'ամբաստանեն: Կրօն. Ժողովը քննութեամբ հաստատած է, որ Պօղոսի զրպարտուիլը անտեղի է և բժշկական քննութիւնք հաստատած են Պօղոսի հակաբնական մձղնէութիւնը:

Լուծելով Պօղոսի և Ազնիւի ամուսնութիւնը, կ'արսօնեմք Ազնիւի վերամուսնութիւնը և Պօղոսը կը զրկենք վերամուսնութենէ:

27. Յունիս 10.— Հարունիէցի 25 ամեայ Արիս Սապերեան 1924 Ապրիլ 6 գրութեամբ կ'ամբաստանէ իր կինը Ատանացի 28 ամեայ Վիքթորիա Սորոզպօզանեան իբրև խառնակեաց Չոմաքլուցի Արամ Սուզունեանի հետ, և ապա ի Պէյրութ հանրատան մէջ Տէօրթեօյի Մաքիտի քով ծառայած է, և Արամին հետ միանալով ընտանեկան յարկը լքած է:

Լուծելով Արիսի և Վիքթորիայի ամուսնութիւնը, կ'արժանանան Արիսի վերամուսնութիւնը և Վիքթորիան հոմանիին հետ կը զրկենք եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

28. Յունիս 22.— Լիմասօլաքնակ Շանթ Գէորգեանի և իր կնոջ Վիրժինի, ծնեայ Քէմալեան, խնդրոյն քննութենէն տեսնուեցաւ որ, հակառակ երկու զաւակաց մայր ըլլալուն, եղբրելի կեանք մը կ'ապրի և միմեք կը հաստատեն:

Լուծելով Շանթ Գէորգեանի և Վիրժինի ամուսնութիւնը, կ'արժանանան Շանթի վերամուսնութիւնը:

29. Յունիս 22.— Միսիսցի Հապիպ Գրիգորեանի ամուսնական խնդրոյ համար ուղուած բացատրութիւնը բաւական կը համարինք:

Լուծելով Հապիպի և Եղիսաբէթի ամուսնութիւնը, կ'արժանանան Հապիպի վերամուսնութիւնը և Եղիսաբէթը կը զրկենք իբրև անարժան ընտանեկան կեանքի:

30. Յունիս 22.— Մարաշցի 28 ամեայ Վարդանոյզ Կէօկօղլանեան կ'ամբաստանէ իր էրիկը Սարգիս Արթինեանը իբրև ծոյլ, գինեմոլ և ընտանեկան հաւատարմութեան մասին անտարբեր: Սիրով ապրելու ամէն յորդոր և աշխատանք անհետեանք մնացեր են:

Լուծելով Սարգիսի և Վարդանոյզի ամուսնութիւնը, կ'արժանանան Վարդանոյզի վերամուսնութիւնը եւ Սարգիսը կը զրկենք եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

31. Յունիս 22.— Սոսցի 36 ամեայ Գրիգոր Պալեանի կինը համաքաղաքացի 26 ամեայ Մարիամ Տէմիրճեան երկու տարի առաջ վատահամբաւ քրոջ Մաքիտի հրապուրանօք ընտանեկան յարկը թողլով ի Պէյրութ, թիւ 32 հանրատունը կ'ապաստանի:

Լուծելով Գրիգորի և Մարիամի ամուսնութիւնը, կ'արժանանան Գրիգորի վերամուսնութիւնը և Մարիամը կը զրկենք իբրև հանրակին:

32. Յունիս 22.— Հաճընցի Մարտիրոս Չալըգեան 35 ամեայ, տարագրութենէն մէկ տարի առաջ ամուսնացած է յիտանա Մարի Պատմաճեանի հետ, որ կ'ամբաստանէ կինը իբրև անհաւատարիմ եւ երգուեալ վրկաներով կը հաստատէ: Մէկուկէս տարի առաջ Ամերիկա երթալու համար կը մեկնի եւ այժմ ի Մարսէլլ կը գտնուի:

Լուծելով Մարտիրոսի եւ Մարիի ամուսնութիւնը, կ'արժանանան Մարտիրոսի վերամուսնութիւնը եւ Մարին կը զրկենք իբրև անհաւատարիմ իր ուխտին:

33. Յունիս 7.— Կեսարացի Նարինիլիլ երկրորդ անգամ կ'ամուսնանայ Յարութիւն Գրիգորեանի հետ: Յետ եռամեայ կենակցութեան, Յարութիւնի մեռած կարծուած կինը մէջտեղ կ'ելլէ: Յարութիւն թողլով Նարինիլիլը, կը միանայ իր օրինաւոր կնոջ:

Լուծելով Յարութիւնի և Նարինիլիլի ամուսնութիւնը, կ'արժանանան Նարինիլիլի վերամուսնութիւնը, պարտաւորելով Յարութիւնը՝ վերագարձնելու 20 Սուրիական և տան զրաւեալ կարասիները:

34. Յուլիս 7.— Կեսարացի Բարսեղ Սարաճեանը թողով Հռիփսիմէն՝ կը միանայ Թուրքիայէն ազատուող առաջին կնոջ:

Կ'արսօնեմք Հռիփսիմէի վերամուսնութիւնը՝ պարտաւորելով Բարսեղը, որ իր հայրական պարտքը կատարէ, տալով որոշ գումար մը, ի սնունդ եռամեայ սրբւոյն:

35. Յուլիս 7.— Ատարազարցի Յովսէփ Մալաճեան, առանց բանաւոր պատճառի կը լքէ իր կինը Պրուսացի Աղաւնին՝ ութնամեայ զաւկով:

Յովսէփ կ'ապրի ի Դամասկոս, Աղաւնի ի Պէյբութ մօրը քով. Յովսէփի կեանքը կեղտոտ է:

Լուծելով Յովսէփի և Աղաւնիի ամուսնութիւնը, կ'արսօնեմք Աղաւնիի վերամուսնութիւնը և Յովսէփը կը գրկենք Եկեղեցւոյ հաղորդակցութենէ: Հաղորդել Դամասկոսի Տեսչութեան:

36. Յուլիս 7.— Մարաշցի Յովհաննէս ձերմակեանի և կնոջ Տիգրանուհի Քէչիշեանի խնդիրը երկար տարիներէ ի վեր կրօն. Ժողովի քննութեան նիւթ ըլլալով՝ հաշտութիւն կարելի չէ եղած է: Յովհաննէս Հար. Ամերիկա մեկնելով հոն ուրիշի մը հետ ամուսնացած է:

Լուծելով Յովհաննէսի և Տիգրանուհիի ամուսնութիւնը, կ'արսօնեմք Տիգրանուհիի վերամուսնութիւնը:

37. Յուլիս 7.— Տիգրանակերտցի Թովմաս Մարգարեանի կնոջ Եգեսացի Մարիին կանոնաւոր ապրուստ մը ճարելու անկարողութիւնը տեղի տուած է Մարին սիրահարական յարաբերութեանց և խռնակեցութեանց ըստ հաճոյս ապրելու: Թովմաս աչք գոցած է և գիմելով կրօն. Ժողովոյ ամուսնալուծում կը խըն-

դրէ: Կինը խոտովանելով յանցանքը, կը խոտանայ հաւատարիմ մնալ: Թովմաս չը յօժարիր վերամիանալ:

Երկուքն ալ հաւասարապէս յանցաւոր են: Յորդորել, որ սիրով և հաւատարմարար ապրին:

38. Յուլիս 7.— Հաճընցի Լեոն Տէմիրճեան Սուրուճէն, բաժնուելով իր կնոջմէն, Արաքսի Տէմիրճեանէն, խարէութեամբ Պոլսոյ մէջ կը յաջողի իրրև ամուսնի երկրորդ ամուսնութեան և չը ճանաչեր իր տասնամեայ աղջիկը իրրև հարազատ զաւակ:

Լուծելով Լեոնի և Արաքսիի ամուսնութիւնը, կ'արսօնեմք Արաքսիի վերամուսնութիւնը և Լեոնը կը զըրկենք Եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

39. Յուլիս 7.— Խառն ամուսնութեան դառնագոյն պտուղ:

Լուծելով Մարաշցի Կիւրճի Տօտագեանի ամուսնութիւնը ընդ Հոնացի Հերակլէի, կ'արսօնեմք Կիւրճիի վերամուսնութիւնը:

40. Յուլիս 7.— Այնթապցի Մանասէն, հակառակ իր կնոջ Մարիի անհաւատարմութեան, կ'աշտատի ըզգաստութեան բերել զայն, բայց կինը լքելով ընտանեկան յարկը, փախած է Պէյբութ մօրը քով ու վերադառնալու մասին յամառօրէն անդրդուելի է:

Լուծելով Մանասէի և Մարիի ամուսնութիւնը, կ'արսօնեմք Մանասէի վերամուսնութիւնը և Մարին կը զըրկենք:

41. Յուլիս 14.— Տիգրանակերտցի Թուխման Հայկունի երեսուներեօթը տարի առաջ ամուսնացած է համաքաղաքացի Թոմա Զիլինկիրեանի հետ: Քսան եւ չորս տարի սիրով կ'ապրին և հինգ զաւակներու տէր կ'ըլլան: Տասներկու տարի առաջ Ամերիկա կ'երթան

լաւագոյն ապագայի յուսով, բայց ընտանեկան խաղա-  
զութիւնը կը խանգարուի և թումա զաւակներով կը  
ւրէ ընտանեկան յարկը:

Լուծելով թուխմանի ամուսնութիւնը, կ'արժանանան  
վերամուսնութիւնը:

42. Օգոստ. 13. — Սոսիցի Նազար Բէլ Կարապետ-  
եան 1922ին Եօզղատցի Սամուէլ Դարխանի կինը  
թագուհին առեւանգելով Պաղեստին անցած է: Ժամա-  
նակ մը վերջ՝ զղջալով կը խնդրեն Ս. Պատկով օրինա-  
կանացնել ապօրինի կենսակցութիւննին: Յիշեալներու  
զղջումը անկեղծ համարելով, հայրաբար կը ներեմք և  
կը հրամայենք ընդունիլ ի ձոյց Մայրենի Եկեղեցւոյ և  
սյուսկը կատարել:

43. Օգոստ. 13. — Ատանացի 25 ամեայ Նազար-  
էթ Մարգարեան ամուսնացած է Ատանա 1930ին Սա-  
ռալի հետ, ծնեալ Մելքոնեան, կ'ամբաստանէ կինը:  
Կրօն. Ժողովը լսելով ամբաստանողին և ամբաստան-  
եալին բացատրութիւնները, վերահասու կ'ըլլայ, որ  
մօրը թեւազրութեամբ ապօրինի կենսակցութեան կ'ըս-  
կսի և խաղամու ու անբարոյ երուանդ անուն երիտա-  
նարդի մը հետ ապօրինի կենսակցութեամբ կը բռնուի:

Լուծելով Նազարէթի և Սառալի ամուսնութիւնը,  
կ'արժանանան վերամուսնութիւնը և Սառան  
կը զրկենք Եկեղեցւոյ հաղորդակցութենէ:

44. Օգոստ. 13. — Եօզղատի Պուրուչըլացի 30  
ամեայ թուրվանտա կ'ամբաստանէ իր էրիկը Տիգրան  
Փափազեան իբրև առնականութենէ զուրկ: Բժշկա-  
կան կրկին քննութիւնք կը հաստատեն թուրվանտայի  
ամբաստանութիւնը:

Լուծելով Տիգրանի և թուրվանտայի ամուսնու-

թիւնը, կ'արժանանան թուրվանտայի վերամուսնու-  
թիւնը:

45. Օգոստ. 31. — Այնթապցի Ատանաբնակ 25 ամ-  
եայ Սարգիս Պաճագազեանի կինը, Պուրսացի 18 ամ-  
եայ Սիրանոյշ, պսակեալ 1925 Փետր. 16ին, պճնա-  
նասէր, թեթեւ ու անբարոյ, տեղի տուած է ընտանե-  
կան անհամաձայնութեան: Կրօն. Ժողովը աշխատած  
է հաշտեցնել բայց Սիրանոյշ կը փախչի Դամասկոս,  
ուր արաբ զինուորի մը հետ յանցապարտ յարաբերու-  
թիւն կը հաստատէ և կը լուսանկարուի:

Լուծելով Սարգիսի և Սիրանոյշի ամուսնութիւնը,  
կ'արժանանան վերամուսնութիւնը և Սիրանոյշը  
իբրև անհաւատարիմ և խռոնակեաց կը զրկենք:

46. Օգոստ. 31. — Ֆրնտըճագցի Հայֆայաբնակ  
27 ամեայ Սաչիկ Գալայճեանի կինը՝ այրի Տուաու Պօ-  
յաճեան մեռած կարծած է իր օրինաւոր ամուսինը՝  
Մարաչցի Մովսէս Առաքելեան, որը վերագտնուած ըլ-  
լալով կը թողու Սաչիկը և կը միանայ Մովսէսի:

Լուծելով Սաչիկի երկրորդ ամուսնութիւնը իբրև  
անվաւեր, կ'արժանանան վերամուսնութիւնը:

Գեբ. Տ. Եփրեմ Ծ. Վարդապետի 29 Սեպտ.

732 Թիւ Նամակներ:

47. Հոկտ. 24. — Հաճընցի Գրիգոր Հաճընեան  
ամուսնացած է յԱտանա 1920ին Սոսիցի Մարիամ Դա-  
նիէլեանի հետ: Արտագաղթէն ետքը երեք ամիս Դա-  
մասկոսի մէջ կ'ապրին: Մարիամ, առարկելով Գրիգորի  
առնական պակասութիւնը, Պէյրութ կ'երթայ և կը  
կենակցի Ատանացի Սէտէֆճեան Յովհաննէսի հետ:

Լուծելով Գրիգորի և Մարիամի ամուսնութիւնը,

կ'արսօնեմք Գրիգորի վերամուսնութիւնը, իսկ Մարիամը իբրև խառնակեաց կը զրկենք եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

48. Հոկ. 24. — Ատանացի Ստեփան Գասապեան ժամանակի պահանջմամբ պատերազմի շրջանին քաղաքական նիքեահով կը միանայ Օրթոտոքս Ասորի Ակիւլի հետ, որ Ատանա կը զրկուի 1918ին: Ստեփան Շէքրիֆ Ֆէյսալին զինուոր գրուելով Ատանա կը վերադառնայ, ուր Ակիւլը գտնելով Ասորի քահանայից հըսկողութեան տակ, չէ ուզած վերադառնալ ամուսնոյն:

Մեզի համար իսլամական նիքեահը անվաւեր և անընդունելի բլլալով, կ'արսօնեմք Ստեփանի վերամուսնութիւնը:

49. Նոյ. 26. — Ատանացի Սամուէլ Աւետիսեան 55 ամեայ, 1911ին ամուսնացած է երկրորդ պսակով 18 ամեայ Ովսաննա Գասապեանի հետ, որ յայտնելով Սամուէլի տասն տարիներէ ի վեր առնականութենէ դադրած բլլալը, ամուսնալուծում և վերամուսնութիւն կը խնդրէ: Իր կուսութիւնը պահած է ապրելով անբասիր կեանքով:

Լուծելով Սամուէլի և Ովսաննայի ամուսնութիւնը, Ովսաննայի իրաւունք կուտանք վերամուսնութեան:

50. Դեկտ. 13. — Հաճընցի Անթառամ Տարազըճեան 11 տարի առաջ, կամ 13 ամեայ հասակին մէջ ամուսնացած է Սեդրաք Տարազճեանի հետ, որ ըստ տեղեկատուութեան Յունաստանի Առաջնորդ Կարաբապետ Ս. Եպիսկոպոսի, ի Գավալա ամուսնացած է Սիվրիհիսարցի Մարիամ Տոմպաեանի հետ և երկու զաւակի տէր եղած:

Լուծելով Սեդրաքի և Անթառամի ամուսնութիւնը, կ'արսօնեմք վերամուսնութիւնը Անթառամի:

1927

Հալեպի Կրօն. Ժողովոյ 102 Յունվար

26 Գրուքիւն

1. Յունվ. 27. — Մաշկերտցի Նիկողոս Քիւրքճեան, հանրածանօթ անբարոյ կեանքով, կնիկը ողջ բլլալով և 20 ամեայ զաւակ ունենալով՝ խաբէութեամբ Անտիոքի Թաղ. Խորհուրդէն վկայական ձեռք բերելով պսակուած է Կիւրիւնցի Թահմազեան վարդուհի օրիորդին հետ, որ հազիւ Նիկողոսի 60 տարիներուն կէս տարիքը ունի:

Անվաւեր համարելով պսակը, պսակագիր Խորէն Քահանայէն առնել պսակի դրամը և աղքատաց հացի դրամ ընել, և փրկոնագուրի հրամայել, որ եկեղեցի երթայ և դասէն դուրս աղօթէ:

2. Յունվ. 29. — 1926 Մայիս 1 Պէյրութի հայ թերթերուն մէջ յայտարարութեամբ 1919էն ի վեր ողջ կամ մեռած բլլալը կերմիրցի Գէորգ Երեմեանի Առաջնորդարանին հաղորդել հինգամեայ միջոցին: Պայմանաժամի առաջին օրէն 15 ամիսներ կ'անցնին և տեղեկութիւն չը տրուիր:

Լուծուելով եկեղեցական օրինօք՝ Գէորգի և իր կնոջ Մարիի ամուսնութիւնը, կ'արսօնուի Մարիի վերամուսնութիւնը:

3. Յունվ. 31. — Յարութիւն Պէրպէրեան Պաղ-

տատի կից Կիլան գաղթավայրին մէջ կարօտ և անօգնական մնացած է, իսկ կինը Եղիսաբէթ՝ քանիցս Առաջնորդարանի կոչերուն չէ պատասխանած. ամուսնութեան միակ նպատակը եղած է օրական հացը ապահովել: Քիչ կը պատահի, որ այր մարդ մը իր բախտը կապէ իր կրկին տարիքը սենեցող կնկան մը: Կը կասկածուի Եղիսաբէթի աղանդաւոր ըլլալը:

Լուծուելով Յարութիւնի և Եղիսաբէթի ամուսնութիւնը, երկուքն ալ կը զրկուին վերամուսնութենէ:

4. Փետր. 21.— Ատանացի ատամնաբոյժ Յ. Կիրակոսեան ամուսնացած է Ատանացի Մարի Չափութտուչեանի հետ: Պէտք չէր Կիրակոսեանի Պատրիարքարան դիմել. թէրևս տեղական սովորութեան անգիտակից՝ այդ քայլը առած է: Եկեղեցական մարմնոյ մը կապածը ուրիշ Եկեղեցական մարմին մը չը կրնար լուծել կամ խզել:

5. Փետր. 21.— Կիպրացի Փիլիպպոս Սինապեան կ'ուզէ ամուսնանալ իր քենիին հետ: Հակառակ մերժումին օտարներուն պիտի դիմէ: Թէև առաջին պատահումն է, բայց նկատելով որ օգտակար կրնայ ըլլալ, բացառապէս՝

Կ'արսօնուի, պայմանաւ որ առնելիքը Հայ Եկեղեցոյ զաւակ ըլլայ:

6. Փետր. 26.— Այնթապցի 28ամեայ Յարութիւն Պօսնոսեանի և համաքաղաքացի 23ամեայ Վահիտէի ամուսնական խնդիրը տխուր և գարշաբօյր է:

Վահիտէ ամուսնութենէ առաջ ծանօթ է իր աղտոտ կեանքով: Ամուսնոյն չէօֆէրական պաշտօնով բացակայութենէն օգտուելով, զանազաններու հետ մեղա-

պարտ յարաբերութիւն կը հաստատէ: Ի զգաստութիւն՝ Ազգ. Ապաստանարան կը զրուի, ուրկէ փախչելով հոմանիներու քով կ'ապաստանի:

Լուծուելով Յարութիւնի և Վահիտէի ամուսնութիւնը, Յարութիւնը առ ի փորձ՝ ժամանակ մը անպսակ թողուլ, մինչև որ կարողանայ ընտանիք պահելու զգայութիւն ձեռք բերել, իսկ Վահիտէ կը զըրկուի Եկեղեցոյ հաղորդակցութենէն և վերամուսնութեան իրաւունքէն:

7. Մարտ. 3.— Տիգրանակերտցի Կարապետ Գալանձեան երրորդ վերամուսնութեամբ Մարաշցի Մարիձա կէօժօղլիեանի հետ հազիւ մի քանի ամիս խաղաղ կենակցութենէ ետքը անհամաձայնութիւնը կ'սկսի Կարապետին նախորդ կնկան մշանալով, որ փախչելով վերջնականապէս միացած է թիւրք հոմանիին: Մարիձա իր նորածինով ի Պէյրութ մօրը քով կ'ապաստանի և մաքուր կեանքով կ'ապրի:

Լուծուելով Կարապետի և Մարիձայի ամուսնութիւնը, կ'արսօնուի Մարիձայի վերամուսնութիւնը: Հազարդել ի Պաղատա:

8. Մարտ 3.— Տիգրանակերտցի Թովմաս Մարգարեանի և իր կնոջ, ազգաւ Ասորի, Մարիի խնդիրը 1926էն ի վեր կրօն. ժողովոյ և Դատ. Խորհրդոյ ըզբաղմանց առարկայ ըլլալով, խղճամիտ քննութեամբ հաստատուած է առն և կնոջ յանցապարտութիւնը:

Լուծուելով Թովմասի և Մարի ամուսնութիւնը, կ'արսօնուի Մարիի վերամուսնութիւնը և ազատ կը թողուի վերադառնալ իր Մայր Եկեղեցոյն:

9. Մարտ 18.— Յարութիւն Պերպէրեան Մարտ 3 ամսաթիւ խնդրագրով վերամուսնանալու զրկումին

կրկին պատճառները սխալ հասկացուած ըլլալը կը բացատրէ, զոր կը ներփակենք յանձնարարութեամբ, որ Պատ. կրօն. ժողովը հաճի վերաքննել և տեղեկագրել մեզ: Եթէ Յարութիւնի յառաջընթացները ստոյգ են, գիտցողներ և ճանչուորներ կը վկայեն երգմամբ, հարկ պիտի ըլլայ՝ ի սէր արդարութեան նախորդ վճիռը բարեփոխել:

Ուտտի մանրակրկիտ քննութեամբ ստուգելէ ետքը, Յարութիւնը բժշկական քննութեան ենթարկել, իմանալու համար թէ վարակիչ ախտէ և առնական պակասութենէ զերծ է թէ ոչ: Այս եղիսաբէթի հաշորդել թէ իր մասին եղած որոշումը անփոփոխ պահելով՝ Յարութիւնի վերամուսնութիւնը պիտի արժանանայ:

10. Ապրիլ 12.— Քիլիսցի 25ամեայ Ստեփան Քէլլիկեանի կինը Այնթապցի 22ամեայ Տուտու, ծընեալ Օրուլեան, կ'ամբաստանէ իր էրիկը, որ զաւակ չունենալու համար Սողոմական մերձեցումներ կը կատարէ կնոջ վրայ, զոր անձամբ խոստովանած է. այսու հանգերձ կրօն. ժողովոյ հաշտարար յորդորներուն համակերպած չէ, անպարկեշտ և տմարդի վարմունքով կրօն. ժողովոյ պատկառելիութիւնը նսեմացնելով:

Լուծելով Ստեփանի և Տուտուի ամուսնութիւնը, կ'արժանանայ Տուտուի վերամուսնութիւնը և Ստեփանը կը զրկենք եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

11. Ապրիլ 18.— Սինոպցի Պողոս Յարութիւնեան 28ամեայ, կը բողոքէ իր կնոջ Տիվրիկցի Մարիամի, 23ամեայ, անվայել և անհաւատարիմ ընթացքի մասին:

Դատաստանական Խորհուրդը խզճամիտ քննութեամբ համոզում դոյացուցեր է Մարիամին մեղանշումին ընդդէմ ամուսնական ուխտին և Պողոսի թերացած ըլլալուն իր ամուսնական պարտաւորութեանց մէջ և հակառակ թափուած ջանքերուն, վերակենսակցութիւնը անկարելի եղած է:

Լուծելով Պողոսի և Մարիի ամուսնութիւնը, կ'արժանանայ Պողոսի վերամուսնութիւնը, իսկ Մարիամը կը զրկենք նոյն իրաւունքէն, մինչև կարողանայ ուղղուել և բարւոյք կենցաղափարութեան արժանաւոր և վստահելի վկայութիւններ ձեռք բերել:

12. Ապրիլ 18.— Սասունցի Արօ Խաչօեանի անյարմար ու Հայրապետական տնօրէնութեան հակառակ եղող 1925 Նոյեմբերի պսակադրութիւնը անվաւեր համարելով Արօն միամեայ ապաշխարութենէ ետքը վերամուսնանալու արտօնուած ու Խաչօնը զըրկուած էր:

Կրօն. ժողովը նկատի առնելով Արօի 18 Մարտ 1927 խնդրագիրը և հետամուտ ըլլալով տեղի ունեցած խարէութեան իսկական շարժառիթին, պէտք տեսած է միջնորդել և Հայրապետական ներողութեան արժանացնել: Ի յարգանս միջնորդութեան և Արօյի յետ միամեայ ապաշխարութեան վերամուսնանալու իրաւունքը ի գործ չի դնելուն, կը ներենք պսակ վաւերական համարելով և արտօնելով տասնամեայ մանուկին մկրտութիւնը:

13. Ապրիլ 18.— Այնթապցի Աւետիս Պօլաճեանի և իր կնոջ Քիլիսցի Էլէնիէի խնդրոյն քննութիւնը որոշ կերպով ցոյց տուած է Աւետիսի արբեցութիւնը, խաղամուսնութիւնը և ընտանեկան բոյն կազմելու անընդունակութիւնը, մանաւանդ բժշկական քննութեամբ

հաստատուած հակաբնական անասնականութիւնը եւ կրնը անբարոյութեան առաջնորդող կատկածելի վարմունքը :

Լուծելով Աւետիսի և Էլէնիէի ամուսնութիւնը, Էլէնիէի վերամուսնութիւնը մէկ տարի յետո՞՞ք չոր չարիքներու բաց դուռ համարելով՝ կ'արժանանայ վերամուսնութիւնը՝ երբ պատեհութիւն ներկայանայ իսկ Աւետիսը, որ հայրական զգաստութենէ ալ զուրկ կը նկատուի, քիչ է միամեայ զրկանքը. ուստի կը պարտադրենք, որ կրօն. փողովը արթուն հսկողութեան ենթարկէ և երբ կատարելապէս զգաստանայ ծուլութենէ, արբեցութենէ, խաղամուլութենէ և իսպառ հրաժարի և բարեք վկայութիւն ու միջնորդութիւն ձեռք բերէ, այն ատեն միայն նկատողութեան կ'առնուի վերամուսնանալու պէտքը :

14. Մայիս 13.— Բաւական համարելով վեց տարիներու վերամուսնանալու իրաւագրկումը, մանաւանդ առիթ չը տալու համար նոր սայթաքումներու, կ'արժանանայ նէճիպէի վերամուսնութիւնը, պայմանաւ որ, ինչպէս քննական տեղեկագրի եզրակնցութիւնն է, առնելիքը ըլլայ վկայեալ պարկեշտ ու ատակ ընտանիք պահելու :

Որքան որ նէճիպէ պարտաւոր է այս ընտրութեան մասին լուրջ, զգաստ և արթուն ըլլալ, նոյնչափ եւ աւելի պարտաւոր է ծխատէր քահանայն, որպէսզի փոխանակ ընտանեկան բոյնի, ապականութեան նոր օձախ մը չի կազմուի :

Պատ. կրօն. փողովը ազգուպէս պատուիրելու է որ յափշտփոյ նշանախօսութիւն չը կատարեն, այլ յետ խղճամիտ քննութեան, ստուգելով երկու կողմին ալ պարկեշտութիւնը, բնաւորութեանց յարմարութիւնը

և ապա հաստատել օրհնութիւնը :

15. Յունիս 4.— Չանագ-Գալէցի Նուարդ Մկրտիչ-Կանի նախորդ այրը Պուսեցի Խաչիկ Խաչիկեանը 1919ին ընտանեկան գժտութեամբ կը լքէ և Յունաստան մեկնելով ընդ այլու՞մ կ'ամուսնանայ, որ մեռնելով, Խաչիկ Ալպանիոյ մէջ կը պատրաստուի երրորդ ամուսնութեան. իբրև հասարակաց վայրերու երգիչ, Խաչիկ իր ինկած կեանքը հրապարակած է և մի՞ գուցէ Նուարդն ալ միևնոյն նկարագրին ունենայ : Եթէ պարկեշտութիւնը կը վկայուի՝

կը լուծենք Խաչիկի և Նուարդի ամուսնութիւնը, և կ'արժանանայ Նուարդի վերամուսնութիւնը :

16. Յունիս 4.— Հաճընցի Մանուկ Տարազեան, Զինագաղարի գինովութենէն տարուած, իբրև թէ հորի մը ճախճախուտը ինկած մէկը ազատելու համար, ինքը կը խրի մէջը : Հայրաբար երկու ամիս միջոց կուտանք, որպէսզի երկու քն ալ ազատին ճախճախուտէն. ըստ այսմ յորդորեցէք և յայտարարեցէք որ հակառակ պարագային պիտի ամուսնանալու ձուլին :

17. Յունիս 4.— Կարապետ Հայրապետեան քանի՞ տարեկան է եւ իր քանի՞րորդ ամուսնութիւնը. երկու ամիս միջոց կուտանք ուշաբերելու և ըստ իրենց ուխտին հաշտ և ներողամիտ ոգով ապրելու. հակառակ պարագային պիտի ամուսնանալու ձուլին, տալով իրաւունս վերամուսնութեան՝ արգար և պարկեշտ կողմին :

18. Յունիս 15.— Հաճընցի 35ամեայ Պետրոս Դըրըմեան, 1919ին բռնադատութեամբ պսակուած է յԱտանա՝ Կարնեցի 20ամեայ Լուսածին Մանուկեանի հետ, որ միայն 15 օր կենակցելով, կը լքէ ընտանեկան յարկը ու կը զինուորի Շիշմանեանի մօտ, և յորէ անտի չը գիտցուիր ո՛ւր գտնուիլը : Քննութեամբ հաս-

տատուած է Լուսաձինի ապօրէն կենցաղը ամուսնութենէ առաջ, և Պետրոսի պարկեշտ ու պատուաւոր կեանքը հաստատուած է երզուեալ վկաներով:

Լուծելով Պետրոսի և Լուսաձինի ամուսնութիւնը, կ'արժանանանք Պետրոսի վերամուսնութիւնը:

19. Յունիս 15.— Չամաքլուցի, այժմ 35 տարեկան թովմաս Մանուկեան, ամուսնացեալ 1922ին կեսարիոյ Պէլէկէս զիւղացի Արաքսի թունուզեանի հետ: Յետ մէկուկէս ամեայ կենակցութեան, թովմաս կը հիւանդանայ ի Ճիպէյլ և բժշկական գործողութեան ենթարկուելով ամորձիքները կը հանուին: Արաքսի սերնդագործութեան փափաքանօք կ'ուզէ ամուսնալուծուիլ, և հակառակ կրօն. ժողովոյ յորդորներուն և առանց վերջնական վճիռին, համազիւղացի կարապետ Բուլանեանի հետ կը փախչի ի Թրիփօլի և ապօրէն կենակցութեամբ կ'ապրի կարապետին հետ:

Լուծելով թովմասի և Արաքսիի ամուսնութիւնը, Արաքսիին կը զրկենք հոգևոր մատակարարութենէ: Հազորգել թրօփօլիի թաղական Խորհուրդին:

20. Յունիս 18.— Հարունիէցի Յարութիւնի մասին բարեոք վկայութիւն տուողները արժանահաւատ և պատուաւոր կրնան ըլլալ. սակայն առանց երզման վկայութիւնը կասկածելի է: Յարութիւնի ապաշխարանքը բաւական համարելէն յետոյ բնական է թէ պիտի ամուսնանալ ուզէ, գլխէ հանած Մարիամը, որ այժմ Իսկէնտէրուն կը գտնուի և իբրև թէ կը շարունակէ անբարոյ կենցաղը, պիտի յօժարութիւն առնուի. մօտէն ճանչցողներու վկայութիւնէն աւելի կարևորն է Տ. Գրիգորէն ուղուելիք և առնուելիք տեղեկութիւնը:

21. Յունիս 18.— Դամասկոսէն Ռուբէն Գուլուճեան կը գրէ, որ իր կինը թուրվանտա, լքելով ընտանեկան յարկը, ի Պէյրութ Մատամի քէմբը կը բնակի իր զաւկին հետ: Այս խնդիրը ծանօթ է իրեն և մեզ: Վերջին անգամ կանչելով յատեան յորդորեցէք որ վերագառնայ իր էրկան. եթէ չը հնազանդի, տղան առէք և հօրը զրկեցէք ապահով եղանակաւ: Բնական է թէ Ռուբէնի վերամուսնութիւնը պիտի արտօնուի, իսկ թուրվանտա պիտի զրկուի:

22. Յունիս 18.— Բացառաբար կ'արժանանանք Պրն. Եսայի Պզտիկեանի պսակադրութիւնը ՎարդաՎառի երեկոյին, պայմանաւ որ թագվերացը Բչ.ի երեկոյին կատարուի. օրէնքի բացառութիւնը օրհնաբեր չըլլար, իցիւ թէ երջանիկ և փոխադարձ սիրով ապրին:

23. Օգոստ. 28.— Տէօրթ-Եօլցի 30ամեայ Վահան Գարասարգլտեան 1920ին ամուսնացեր է համաքաղաքացի 25 ամեայ Արաքսի Վասիլեանի հետ, որ էրկան ժանտարմայի պաշտօնով բացակայութենէն օտուելով, ընտանեկան յարկը ձգած ու ապաստանած է Նիկիոյ անուն յոյնին քով: Վահանի 1926 Յունիս 26 խնդրագիրը նկատողութեան առնելով, կրօն. ժողովը 26 Դեկտ.—27 Յունիս 22 երեք նիստերու մէջ լսելով ամբաստանողն ու ամբաստանեալը, փորձած է միացնել, բայց կինը մերժած է և Նիկիոյի հետ փախած Իսկէնտէրուն, ուր կ'ապրի ապօրինապէս:

Լուծելով Վահանի և Արաքսիի ամուսնութիւնը, յետ եռամեայ ապաշխարութեան՝ օտարի մը հետ ամուսնացած ըլլալուն՝ կ'արժանանանք Վահանի վերամուսնութիւնը և Արաքսիին կը զրկենք:

24. Օգոստ. 28.— Յարութիւն Տէվէճեան 26 Դեկտ.

7 խնդրագրով կ'ամբաստանէ Իփէկը իբրև տնհաւատաբիւմ և անբարոյ: Կրօն. Ժողովը 1925 Դեկտ. 22--27 Յուլիս 6 յաջորդական ինը նիստերու մէջ քննելով խնդիրը և աշխատելով միացնել, կինը ամենաբիրտ կերպով մերժած է և անարգական կերպով հեռացած Կրօն. Ժողովէն:

Կրօն. Ժողովը կը հաստատէ Յարութիւնի պարկեշտութիւնը և Իփէկի անպարկեշտ կենցաղը և ապօրինի կենակցութիւնը ընդ այլուսմ:

Լուծելով Յարութիւն Տէվէճեանի և Իփէկի ամուսնութիւնը, կ'արտօնեմք Յարութիւնի վերամուսնութիւնը և Իփէկը կը զրկենք Եկեղեցւոյ հաղորդակցութենէ:

25 Օգոստ. 28.— Պրուսայի Պիլէճիկէն 22 ամեայ Թագուհի Քէհէեան, 1920ին ի Տարսոն ամուսնացած է իրեն բնիկ Յովսէփ Քէհէեանի հետ, որ ամուսնութեան առաջին օրերուն իսկ խելագարութեան նշաններ ցոյց կուտայ: Արտագաղթին Պէյրութ կը փոխադրուին և 1922ին Յովսէփ Լիբանանի Ասֆուրիէն (յիմարանոց) կը դրուի և բժշկապետը անբուժելի կը հռչակէ: Եօթը տարիներ տանելով հանգերձ իր խաչը ամուսնալուծում կը խնդրէ:

26. Օգոստ. 28.— Սերաստացի Տիգրան Ազնաւորեան, 28 տարեկան արամբի Ռեբեկայի հետ միանալով ապրած է և երեք զաւակներու տէր եղած, այժմ կը փափաքին Ս. Պատկով վաւերացնել իրենց ապօրէն կենակցութիւնը:

Ռեբեկայի այլը Գրիգոր Կոկիտոնցին ամուսնութեան երրորդ օրը Հաճըն կ'երթայ և հոն կրկին կ'ամուսնանայ. այս երկրորդ կնիկը Հաճընի անկման կ'սպաննուի

և երրորդ անգամ կ'ամուսնանայ այլի կնոջ մը հետ: Ռեբեկան Գրիգորին Հաճընի մէջ երկրորդ անգամ ամուսնանալէն յետոյ, Տիգրանի հետ ապօրէն կենակցութեան կ'սկսի, և ինքն ալ Գրիգորի պէս բարքի և բարոյականի պակասութեամբ այդ յանցապարտ քայլը կ'առնէ:

27. Սեպտ. 3.— Ձէյթունցի Յակոբ Միքայէլեան ի Դամասկոս 1918ին կ'ամուսնանայ Մարաշցի Ովսաննային հետ, բայց ինը տարի վերջ, 1927 Փետր. 15ի խնդրագրով բողոքելով Ովսաննայի անհաւատարիմ և անբարոյ կեանքի մասին, ամուսնալուծում կը խնդրէ: Ովսաննա ի Լաւոզիկէ փոխադրուելով, կ'սկսի սիրային յարաբերութեան մտնել Հաճընցի Արթին Չաւուշին հետ, որ իբրև անբարոյ կը վտարուի: Ովսաննան ամուսնոյն հաւանութեամբ, ի Պէյրութ քրոջը այցելելու պատրուակին տակ, կը միանայ իր հոմանիին և կ'ապրին մէկ սենեակի մէջ:

Ովսաննան ապաստանարան կը դրուի և Յակոբ Ղրութեամբ կը մերժէ և կը պնդէ ամուսնալուծման խնդիրը: Ձղջացեալ Ովսաննան հնարաւորութիւն կը գտնէ փախչելու ապաստանարանէն և միանալու հոմանիին: Վկաներ կը հաստատեն մա'նաւանդ առանց մասնաւոր պատճառի ընտանեկան յարկը լքելը:

Յակոբ տարիներ վերջը կուահելով Ովսաննայի մեղապարտ յարաբերութիւնը, թոյլատու կը գտնուի կինը Պէյրութ ղրկելու. անշուշտ տեղեկացած կ'ըլլար Արթին Չաւուշի հոն ըլլալուն: Կասկածի կ'ենթարկուի Յակոբի թոյլատու տկարութիւնը: Գրել և Յակոբի վարած կեանքի մասին տեղեկութիւն ուզել և յետ այնորիկ վճիռը տալ:

28. Սեպտ. 3.— Սսեցի լարախաղաց Յակոբ Ա.

ըրչեան, վեց տարի առաջ ի Հալէպ կ'ամուսնանայ եղբեսացի շանթէօղ Ռաքէլի հետ: Յակոբ ընդունուած պայմանագրութեամբ, յետ ամուսնութեան երգչի արհեստը պիտի ձգէ: Յակոբ, հակառակ պայմանագրութեան, կ'ստիպէ որ Ռաքէլ իր արհեստը շարունակէ, բայց չը համակերպիր, մա'նաւանդ Յակոբի սողոմական տափանքին, յորմէ ընտանեկան անհամաձայնութիւնը կ'սկսի: Չորս տարի իրրե ալ ու կին բաժանեալ ապրելէ ետք, Անտիոքի մէջ վերջնականապէս կը բաժնուին և Ռաքէլ ի Գրըզ-Սան իր ծնողաց քով կը վերադառնայ և ապրուստի համար իր արհեստը կը շարունակէ եւ շատ մը չարամիտներու հետապնդումին ենթարկուելով, լաւագոյն կը համարի փոխանակ շատերուն, յանձնուելու միակ Պոլսեցի Տօքթ. Յակոբեանի պահանջումին՝ ի ճարապուլուս:

Յակոբ, ընտանեկան յարկի քայքայումէն չորս տարի ետք, 1927 Յունիս 22 ամսաթուով կը բողոքէ իր կնոջ անբարոյութեան դէմ. Յակոբ չէ վայելած իր ակընկալած նիւթական օգուտը Ռաքէլի հետ ամուսնանալով: Յակոբ ի վիճակի՞ է առնելիք կինը անօթի չը պահելու եւ բարի ու պարկեշտ կենցաղ ունի՞:

29. Սեպտ. 3. — Սասունցի Մարգար Բաճօեանի կինը, Այնթապցի Մարին, ծնեալ Պալապանեան, միամեայ զաւկին հետ տան կարաօյները ժողովելով կը փախչի Ալէքսանտրէթ: Այս ցաւառիթ դէպքը Մարգար 924 Յունիս 15 խնդրագրով պարզած է և Օգոստոս 18 թուակիրով կը յայտնէ, որ Մարի Սասունցի Արամ Յակոբեանի հետ փախած է Ալէքսանտրէթ:

Կրօն. ժողովը Ալէթսանտրէթէն բերել տալով կը յաջողի Մարին վերադարձնել Մարգարին և Արամն ալ Սուրիայէն հեռացնելու աշխատիլ: Մարգար 924 Հոկ-

տեմբեր 8 խնդրագրով կը յայտնէ Մարիի փախուստը իր մօր տունը: Ոստիկանութեան մէջոցաւ Ազգ. Ապաստանարան կը դրուի, ուրկէ փախչելով կը միանայ իր ամուսնոյն: 1925 Յունիս 15 գրութեամբ Մարգար կը բողոքէ կնոջը Արամ Յակոբեանի հետ ապօրէն կենակցութեան շարունակութեան մասին:

Լուծելով Մարգարի և Մարիի ամուսնութիւնը, Մարի իր հոմանի Արամին հետ կը զրկուի Եկեղեցւոյ հաղորդակցութենէն և Մարգարը կ'արժանուի վերամուսնութեան:

30. Հոկտ. 5. — Հալէպցի Անտոն Բէլէշեան ամուսնացած է Ասորի-կաթոյիկ Պէտրէի հետ: Կրօն. ժողովը 1920էն ի վեր մանրակրկիտ քննութեամբ հաստատած է Պէտրէի ընտանեկան անհաւատարմութիւնը և անբարոյ կեանքի անձնատուութիւնը:

Լուծուելով Անտոնի և Պէտրէի ամուսնութիւնը, կ'արժանուի Անտոնի վերամուսնութիւնը:

31. Նոյ. 6. — Սասունցի Յարութիւն Յակոբեան քանի որ մեր 11 Մայիս 1926 տնօրէնութեան անեղծ և անխարզախ համակերպութեան զբաւական տուած է ըստ Տ. Բարգէն Բնյ.ի տեղեկագրութեան, զոր Կրօն. ժողովը լւերացուցած է, բաւական համարելով ապաշխարութեան շրջանը,

Կ'արժանուի վերամուսնութիւնը:

32. Նոյ. 6. — Չարսանձազցի Տիկին Զարգարի ամուսինը Յակոբ Սոճիրեան ամուսնացած է Դամասկոսի մէջ: Զարգարի մինչեւ յուսակաուր վերադարձը զիւղէն՝ զաւակներու տէր եղած է:

Կ'արժանուի Զարգարի վերամուսնութիւնը:

33. Նոյ. 6.— Խարբերդի Խոյլու գիւղէն Մարիամ՝ Մատո անուն թիւրքի մը ճիրաններէն հազիւ կ'ազատի և այս ազատումը առիթ կ'ըլլայ Մարիամի ամուսնոյն՝ Գրիգոր Կօկէքեանի՝ որ ի Մարտիրիա պսակուած է օրինաւոր պայմաններու տակ, ըստ 1926 Յուլիս 16 պաշտօնադրութեան Մարտէլի Հոգևոր Հովուութեան։  
Կ'արսօնուի Մարիամի վերամուսնութիւնը։

34. Նոյ. 17.— Ատանացի 25 տարեկան Տիգրանունէին կ'ամուսնանայ 1920ին Բալուցի Յակոբ Զատիկեանի հետ, որուն օրինաւոր կինը Աննիկ՝ գտնուելով կը միանայ իր էրկան Յակոբին։

Կ'արսօնեմք Տիգրանունի Տաքէսեանի վերամուսնութիւնը։

35. Դեկտ. 7.— Զէյթունցի Յակոբ Միքայէլեան միշտ ջանացած է իր կնոջ Ովսանայի հետ սիրով ապրիլ։ Ի Թարթուս քարակոփութեամբ կը պարապի և աշխատութեան արդիւնքով կարող է, Հալէպի Դատ. և Կրօն. Ժողովոց հաւաստեօք, ընտանիք պահել։

Ովսանա հակառակ իր օրինաւոր էրկան սիրոյն, կ'ապրի հոմանիի մը հետ։

Լուծուելով Յակոբի և Ովսանայի ամուսնութիւնը, կ'արսօնուի Յակոբի վերամուսնութիւնը և Ովսանան ու իր հոմանին կը զրկուին եկեղեցւոյ հազորակցութենէն։

36. Դեկտ. 7.— Խարբերդի Բլրակ գիւղէն Զաքէոս Նազարէթեան ամուսնացած է համագիւղացի Նազելի Զաքէոսեանի հետ։ Տարագրութեան շրջանին Ռուսձուգ կը գտնուի և Նազելիի զիմուքները անպատասխանի մնացեր են։

Ի պատասխան Դատ. Խորհրդոյ, Ստեփաննոս Արքեպոս. Յովակիմեան Հոկտ. 4 ամաթիւով, խղճամիտ քննութեամբ հաստատած է որ Զաքէոս ապօրինի կը կենակցի պուլկարուհիի մը հետ և մանչ զաւակ մըն ալ ունեցած է։

Լուծուելով Զաքէոսի և Նազելիի ամուսնութիւնը, կ'արսօնուի Նազելիի վերամուսնութիւնը և Զաքէոսը կը զրկուի եկեղեցւոյ հազորակցութենէն։

37. Դեկտ. 7.— Էվէրէկցի Թորոս Սարաճեան և իր կինը Մարիամ, ծնեալ Եազըճեան, տարագրութեան դժբախտ պարագաներուն իրարմէ կը բաժնուին։ Թորոս Հարաւ. Ամերիկա կ'անցնի և Մարիամ ալ արարներու ձեռքը։ Թորոս ութը տարի առաջ Ատանայի մէջ կ'ամուսնանայ Նիյաէյի Սիմա անուն կնոջ մը հետ։


Մարիամ, Տանիմարքացի Միս Գարէն Եփէի շքանորհիւ կ'ազատի և այժմ վերամուսնութիւն կը խընդըրէ։

Լուծուելով Թորոսի և Մարիամի ամուսնութիւնը, կ'արսօնուի Մարիամի վերամուսնութիւնը։

38. Դեկտ. 7.— Մշեցի Տիւլպէր Ալլահվերտիեան եօթը տարի առաջ ի Տիգրանակերտ ամուսնացած է օրինաւոր պսակով՝ համաքաղաքացի Մեսրոպ Մալէզեանի հետ, որ տարի մը վերջ կինը Հալէպ կը զրկէ՝ այն խոստումով որ ինքն ալ միջոցաւ մը փախչելով պիտի գտնէ զինքը։ Տարիներ կ'անցնին, ոչ նիւթական օգնութիւն և ոչ պատառ մը գրի կը զրկէ, և վերջերս ալ հակառակ իր բարեբարոյ կեանքին և անօգնական թշուառութեան, կը տեղեկանայ որ Մեսրոպ ուրիշ մը հետ ամուսնանալով Հայնէ փոխադրուած է ու ըստ տեղեկատուութեան Տիգրանակերտի Հոգևոր Հովուութեան՝ Մեսրոպ զանազան առարկութիւն-

ներով կը մերժէ իր օրինաւոր կինը և երկրորդ կնոջ-  
մէն չուզեր բաժնուիլ :

Լուծուելով Մեսրոպի և Տիլպէրի ամուսնութիւնը ,  
կ'արտօնուի Տիլպէրի վերամուսնութիւնը , այն հաւաս-  
տեօք՝ թէ Տիլպէր բարոյականի տէր պարկեշտ կին  
մըն է :



1928

1. Յունվար 28. — Անթէպցի Մարիձա , ծնեալ  
Ասլանեան , երեք տարի առաջ ամուսնացած է հայ կա-  
թոլիկ եկեղեցւոյ պսակով Պոլսեցի Կարպիս Գուլում-  
ձեանի հետ , որ անցեալ տարի , Անտիոքի Քահանան  
խաբէլով ամուսնացած է երկրորդի մը հետ լքելով  
Մարիձան թշուառութեան մէջ :

Լուծելով Մարիձայի և Կարպիսի ամուսնութիւնը ,  
կ'արտօնեմք Մարիձայի վերամուսնութիւնը և Կարպիսի  
խաբէութեամբ կատարուած պսակը անվաւեր կը հըռ-  
չակենք :

2. Յունվար 28. — Ագտաղ-Մատէնցի Տիկին Սուլ-  
թան կը բողոքէ ամուսնոյն ձգալեան Յովսէփի դէմ ,  
որ ութ տարի առաջ պսակուած է Յոյն Օրթոտքս  
Քահանայի ձեռամբ և վեց ամիս վերջը պանդխտած  
է առանց նամակ գրելու եւ օգնութիւն ղրկելու :  
Սուլթան չը տոկալով տարիներու թշուառութեան՝ մի-  
ացած է ուրիշի մը հետ ապօրինի կենօք , կը խնդրէ  
իւր միութիւնը օրինականացնել :

Լուծելով Սուլթանի և Յովսէփի ամուսնութիւնը ,  
կ'արտօնեմք Սուլթանի վերամուսնութիւնը յետ ծննդա-  
բերութեան :

Պէյրուքի Կրօն. ժողովոյ 559, 586

Փետր. 4 Գրութիւնք

3. Փետր. 22. — Պէհէսնիցի Յարութիւն Պարսամ-  
եանի կինը Արզընցի Ազնիւ Նաճարեան ընտանեկան  
յարկը լքելով հոմանիին Ատանացի Պետրոս Աւագեանի

հետ փախած է Հալէպ: Առաջնորդարանը պէտք եղած քննութիւնը կատարած է. ծանօթ վկաներ կը հաստատեն Ազնիւի ապօրինի կեանքը:

Լուծելով Յարութիւնի և Ազնիւի ամուսնութիւնը կ'արժանեմք Յարութիւնի վերամուսնութիւնը և Ազնիւը հոմանիին հետ կը զրկենք Եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

4. Փետր. 22.— Մարաշցի 30ամեայ Վարդեվառ Նանճեան 1921ին ի Պաղտատ ամուսնացած է 23ամեայ Թուրվանտայի հետ, որ կ'ամբաստանուի իբրեւ անբարոյ, անուղղայ, եւ ընտանեկան յարկը լքելով Տէօրթ-Եօլցի Գրիգոր Բիւֆթէճեանի կ'երթայ: Կրօն. ժողովը Թուրվանտայի անբարոյ և Գրիգորի հետ ապօրինի կենակցութիւնը կը հաստատէ:

Լուծելով Թուրվանտայի և Վարդեվառ ամուսնութիւնը, կ'արժանեմք Վարդեվառի վերամուսնութիւնը և Թուրվանտան հոմանիին հետ կը զրկենք Եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

5. Փետր. 22.— Յովսէփ Քէհեէեանի եւ Պրուսացի Թագուհիի պսակը կատարուած է ի Տարսոն: Յովսէփի խելագարութիւնը և եօթն տարի հիւանդանոցի մէջ մնալով բժշկապետը անբուժելի դտած է:

Լուծելով Յովսէփի եւ Թագուհիի ամուսնութիւնը կ'արժանեմք Թագուհիի վերամուսնութիւնը, որ պարկեշտ և օրինակելի կեանքով ապրած է:

6. Փետր. 22.— Վարվառ Սէթեանի և ամուսնոյն, որ ոճրագործութեամբ 15 տարուան բանտարկութեան դատապարտուած է.

Լուծելով ամուսնութիւնը, կ'արժանեմք Վարվառի վերամուսնութիւնը:

7. Փետր. 22.— Պաղէցի Դանիէլ Տէմիրճեան 1926ին ամուսնացած է Սսեցի Սիրանուշ Նալպանտեանի հետ: Ամուսնութեան եօթներորդ օրը ընտանեկան յարկը թողուվ փախած է Չահլէ և անտի ի Պանապտա, ուր արաբ քրիստոնէի մը քով սպասուհիութեան կը մտնէ: Կատարուած քննութիւնը կը հաստատէ Դանիէլի պատուաւորութիւնը և ընտանիք պահելու կարողութիւնը, իսկ Սիրանուշի անպարկեշտութիւնը և օտարներու հետ ապօրինի կենակցութիւնը:

Լուծելով Դանիէլի և Սիրանուշի ամուսնութիւնը, կ'արժանեմք Դանիէլի վերամուսնութիւնը և Սիրանուշը կը զրկենք:

Հալէպի Կրօն. ժողովոյ Համար 327

Եւ Փետր. 22 Գրուքիւն

8. Փետր. 27.— Անցի Գրիգոր Երեմեան 40ամեայ կը բողոքէ կնոջ (Հալէպցի) Սիրանուշի անբարոյ ընթացքի մասին, Դատ. Սորհուրդը Գրիգորը պատճառ կը համարի Սիրանուշի սայթաքումներուն: Այր և կին ինկամներ են: Հաշտութեան ջանքերը ապարդիւն մընացած են Գրիգորի մերժումով: Երկուքն ալ միամեայ ապաշտարութեան ենթարկել և խնդիրը կրկին նկատողութեան առնել:

9. Փետր. 27.— Մաշկերացի կրօնափոխ Նիկողոս Բիւրքճեանի կինը Աննայի:

Լուծելով ամուսնութիւնը, կ'արժանեմք վերամուսնութիւնը և ծխատէր քահանայն կը պարտաւորեմք արթուն հսկել որ կորուսեալ Նիկողոս չ'առևանգէ:

10. Մարտ 31.— Կեսարացի Սմբատ Տէվէլեանի և Արտեմիսի ամուսնական խնդրոյն առթիւ առաջադրած պայմանին համաձայն Սմբատ յանձնած է Պատ-

ըրարքարանին 28 Օսմ. հնչուն ոսկին:

Լուծելով Սմբատի և Արտեմիսի ամուսնութիւնը, կ'արսօնեմք Արտեմիսի վերամուսնութիւնը: Սմբատ իր կինը մեռած կարծելով վաղուց ամուսնացած է:

11. Մարտ 31.— Պիրէճիկցի Թորոս Յովհաննէս Թորոսեանը իբրև անբարոյ, անհաւատարիմ և անպարտաճանաչ հաստատուած է Դատաստանական Խորհրդոյ քննութեամբ, Պիրէճիկի Հայր. Միութեան և պատուաւոր անձանց վկայութեամբ:

Լուծելով Թորոսի և կնոջ Մարիամի, ծնեալ Սարգիս Կարապետեանի ամուսնութիւնը, կ'արսօնեմք Մարիի վերամուսնութիւնը և Թորոսը իբրև ցոփակեաց կը զրկենք Եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

Հալեպի Կրօն. Ժողովոյ Համար 17 եւ Ապրիլ 2

Գրութեան կից Դաս. Խորհրդոյ Համար 195

եւ Մարտ 24 Տեղեկագիր

12. Ապրիլ 18.— Եդեսացի Սարգիս Տատանեան չը կարողանալով պահել կինը և զաւակը, Ալէքսանտրէթ գնացած է, խաղամուսնութեան և գինեմուսնութեան անձնատուր, կը մոռնայ իր տունը: Քանիցս կինը Ալէքսանտրէթ գնացած բայց մերժուած է և բարեսէրներու ծախքով վերագառնալով թշուառութեամբ կ'ապրի:

Լուծելով Սարգսի և կնոջ ամուսնութիւնը, իրաւունք կուտանք կնոջ վերամուսնութեան:

13. Ապրիլ 18.— Էլիզ Բիթապճեան, 12ամեայ, ծնողաց ստիպմամբ ամուսնացած է Կեսարացի Յարութիւն Ս. Բիթապճեանի հետ, որ հինգ վեց տարի վերջը կինը լքելով Պոլիս գնացեր է: Հակառակ դիմումներուն որ կնոջ վերագառնայ կամ նիւթապէս օգնէ անխելի կը մնան:

Լուծելով Յարութիւնի և Էլիզայի ամուսնութիւնը, կ'արսօնեմք Էլիզայի վերամուսնութիւնը և Յարութիւնը կը զրկենք:

14. Մայիս 11.— Մարաշցի Յովհաննէս շերմակեանի և Տիգրանուհիի, ծնեալ Քէշիշեան, ամուսնական խնդրոյն առթիւ, երեք տարի առաջ պատուիրած էինք որ համերաշխ ու սիրով կենակցութիւննին շարունակեն: Նկատի ունենալով Տիգրանուհիի մերժումը Յովհաննէսէն և նաեւ ըստ ոմանց Յովհաննէսի Հաւաւ. Ամերիկայի մէջ պսակուած ըլլալը,

Կը լուծենք Յովհաննէսի և Տիգրանուհիի ամուսնութիւնը և կ'արսօնեմք Տիգրանուհիի վերամուսնութիւնը:

15. Մայիս 12.— Քէմալի Թորգանէն Սաթենիկ Թագէոսեանի էրիկը, Քէմալի Չամեր գիւղէն Յովհաննէս Թագէոսեան, տարագրութեան շրջանէն ի վեր լքեցելով Սաթենիկը, Ռումանիա գնացեր եւ ուրիշի մը հետ ամուսնացեր է:

Լուծելով Յովհաննէսի և Սաթենիկի ամուսնութիւնը, կ'արսօնեմք Սաթենիկի վերամուսնութիւնը:

Հալեպի Կրօն. Ժողովոյ կրկին գրութիւնք

Համար 39—40, Մայիս 4

16. Մայիս 22.— Ուրֆացի Սարգիս Տատանեանի նիւթական և բարոյական վիճակն ու ընտանիք պահելու կարողութիւնը երաշխաւորած են Ուրֆացի չորս վստահելի ազգայիններ:

Կ'արսօնեմք Սարգսի վերամուսնութիւնը:

17. Մայիս 22.— Խարբերդի Քէօրբէ գիւղացի Սարգիս Մուրատեան 5-6 տարի առաջ, իր կինը համազիւղացի Վարդանոյշը երկու զաւակներով Հալէպ

կը զրկէ՝ ինքն ալ անոնց հետեւելու խարէական պայմանով . ապա թրքանալով Երեւան եղած է թրքուհի-ին հետ :

Լուծելով Սարգսի և Վարդանոյշի ամուսնութիւնը , կ'արտօնեմք Վարդանոյշի վերամուսնութիւնը :

18. Յուլիս 11.— Տէօրթ-Եօլցի Մելքոն Մելքոնեան , Զէյթունցի Խաչիկ Քարուկեանի սուտ վկայութեան զոհ ըլլալով , կը պսակուի այրի Եսթերին հետ , որուն էրիկը Պէյթունցի Յովհաննէս ողջ է : Յետ ամուսնութեան , Եսթեր քիչ օրէն կը լքէ ընտանեկան յարկը և Դամասկոս փախչելով հոն իսլամ երիտասարդի մը անձնատուր կ'ըլլայ :

Լուծելով Մելքոնի և Եսթերի ամուսնութիւնը , կ'արտօնեմք Մելքոնի վերամուսնութիւնը :

19. Յուլիս 11.— Գոնիացի Յովհաննէս Եազըճեան ամուսնացած է 1922ին Պէյրութի մէջ Նարըլիանցի Սիրանուշի հետ , որ պճնասիրութեամբ , թեթեւաբարոյութեամբ և անհաւատարմութեամբ առիթ կուտայ որ Յովհաննէս խնդրագրով Կրօնական Ժողովին դիմէ :

20. Յուլիս 5.— Պուլտուտուրցի Յովհաննէս Ստեփանեան եօթը տարի առաջ Ագսերայի մէջ պսակուած է Բանիճա անուն յոյն որթոտոքս աղջկան մը հետ , որ Քէմալական յաղթանակէն յետոյ իր ազգակցաց հետ Յունաստան գացած է , հակառակ Յովհաննէսի հետապնդողներուն ու ցարգ անձանօթ կը միայ հասցէն : Այս պարագան կը հաստատէ Գոնիայի Հայրկցն . Միութիւնը :

Լուծելով Յովհաննէսի և Բանիճայի ամուսնութիւնը , կ'արտօնեմք Յովհաննէսի վերամուսնութիւնը :

21. Յուլիս 5.— Հասան-Պէյլիցի 40ամեայ Պէպէք Սարգիս Սաղրեան ամուսնացած է համագլուղացի 34ամեայ Ովսաննայի հետ , ծնեալ Միքայէլեան : Տարագրութեան շրջանին իր կինը մեռած կարծելով կ'ամուսնատեայ Խանըմ Քէշիշեանի հետ և զաւակաց տէր կ'ըլլայ : Հակառակ եղած ջանքերուն , Պէպէք չէ ուզած բաժնուիլ Խանըմէն : Ովսաննա տարագրութենէն ի վեր մաքուր և անբասիր կեանքով ապրած է :

Կ'արտօնեմք Ովսաննայի վերամուսնութիւնը :

22. Յուլիս 5.— Սերաստացի Յովհաննէս Պալեօղեան երկու տարի առաջ իր կնոջ Եգեսացի Արշալոյսին , ծնեալ Վարժապետեան , անբարոյ վարուց մասին բողոքած է : Կրօն . Ժողովը քննութեամբ իրազեկ եղած է Յովհաննէսի բողոքին իրաւացի ըլլալուն : Արշալոյսի խառնակեցութիւնը ամուսնութենէ առաջ իր ծնողքին անպատիւ կենցաղին պատուէն է :

Լուծելով Յովհաննէսի և Արշալոյսի ամուսնութիւնը , կ'արտօնեմք Յովհաննէսի վերամուսնութիւնը և Արշալոյսը իր անպարկեշտ ծնողաց հետ կը զրկենք Եկեղեցւոյ հաղորդակցութենէն :

Հալեպի Կրօն . Ժողովոյ Համար 56—7,49

Մայիս 28 եւ Յունիս 1 Գրուքիւնք

23. Յուլիս 5.— Հասան-Պէյլիցի Օհան Քէլլէպաշեան 1928 Մայիս 3 խնդրագրով կը բողոքէ իր կնոջ Հուրիփիմէի , ծնեալ Մինասեան , անբարոյ վարուց և սիրային յարաբերութեանց մասին Ինչիլլիցի Կարապետ Կէրէքմէկեանի և Հասան-Պէյլիցի Յովհաննէս Մկրտչեանի հետ :

Լուծելով Օհանի և Հուրիփիմէի ամուսնութիւնը , կ'արտօնեմք Օհանի վերամուսնութիւնը և Հուրիփիմէն

կը զրկէ՝ ինքն ալ անոնց հետեւելու խաբէական պայմանով. ապա թրքաճանալով Երֆեան եղած է թրքուհիին հետ :

Լուծելով Սարգսի և Վարդանոյշի ամուսնութիւնը, կ'արտօնեմք Վարդանոյշի վերամուսնութիւնը :

18. Յուլիս 11.— Տէօրթ-Եօյցի Մելքոն Մելքոնեան, Ձէյթունցի Խաչիկ Քարուկեանի սուտ վկայութեան զոհ ըլլալով, կը պսակուի այրի Եսթերին հետ, որուն էրիկը Պէյթունցի Յովհաննէս ողջ է : Յետ ամուսնութեան, Եսթեր քիչ օրէն կը լքէ ընտանեկան յարկը և Դամասկոս փախչելով հոն իսլամ երիտասարդի մը անձնատուր կ'ըլլայ :

Լուծելով Մելքոնի և Եսթերի ամուսնութիւնը, կ'արտօնեմք Մելքոնի վերամուսնութիւնը :

19. Յուլիս 11.— Գոնիացի Յովհաննէս Եղբայրեան ամուսնացած է 1922ին Պէյրութի մէջ Նարլըխանցի Սիրանուշի հետ, որ պճնասիրութեամբ, թեթեւաբարոյութեամբ և անհաւատարմութեամբ առիթ կուտայ որ Յովհաննէս խնդրագրով կրօնական ժողովին դիմէ :

20. Յուլիս 5.— Պուլտուտուրցի Յովհաննէս Ստեփանեան եօթը տարի առաջ Ագսերայի մէջ պսակուած է Բանիձա անուն յոյն որթոտոքս աղջկան մը հետ, որ Քէմալական յաղթանակէն յետոյ իր ազգակցաց հետ Յունաստան գացած է, հակառակ Յովհաննէսի հետապնդումներուն ու ցարդ անձանօթ կը մնայ հասցէն : Այս պարագան կը հաստատէ Գոնիայի Հայրկցն. Միութիւնը :

Լուծելով Յովհաննէսի և Բանիձայի ամուսնութիւնը, կ'արտօնեմք Յովհաննէսի վերամուսնութիւնը :

21. Յուլիս 5.— Հասան-Պէյլիցի 40ամեայ Պէպէք Սարգիս Սաղրեան ամուսնացած է համագլուղացի 34ամեայ Ովսաննայի հետ, ծնեալ Միքայէլեան : Տարադրութեան շրջանին իր կինը մեռած կարծելով կ'ամուսնասեայ Խանըմ Քէշիշեանի հետ և զաւակաց տէր կ'ըլլայ : Հակառակ եղած ջանքերուն, Պէպէք չէ ուզած բաժնուիլ Խանըմէն : Ովսաննա տարադրութենէն ի վեր մաքուր և անբասիր կեանքով ապրած է :  
Կ'արտօնեմք Ովսաննայի վերամուսնութիւնը :

22. Յուլիս 5.— Սերաստացի Յովհաննէս Պալեօզեան երկու տարի առաջ իր կնոջ Եղեսացի Արշալոյսին, ծնեալ Վարժապետեան, անբարոյ վարուց մասին բողոքած է : Կրօն. ժողովը քննութեամբ իրազեկ եղած է Յովհաննէսի բողոքին իրաւացի ըլլալուն : Արշալոյսի խառնակեցութիւնը ամուսնութենէ առաջ իր ծնողքին անպատիւ կենցաղին պտուղն է :

Լուծելով Յովհաննէսի և Արշալոյսի ամուսնութիւնը, կ'արտօնեմք Յովհաննէսի վերամուսնութիւնը և Արշալոյսը իր անպարկեշտ ծնողաց հետ կը զրկենք Եկեղեցւոյ հաղորդակցութենէն :

Հալեպի Կրօն. ժողովոյ Համար 56—7,49

Մայիս 28 և Յունիս 1 Գրութիւնք

23. Յուլիս 5.— Հասան-Պէյլիցի Օհան Քէլէպազեան 1928 Մայիս 3 խնդրագրով կը բողոքէ իր կնոջ Հուփսիմէի, ծնեալ Մինասեան, անբարոյ վարուց և սիրային յարաբերութեանց մասին Ինչլիլիցի Կարապետ Կէրէքմէկեանի և Հասան-Պէյլիցի Յովհաննէս Մկրտաչեանի հետ :

Լուծելով Օհանի և Հուփսիմէի ամուսնութիւնը, կ'արտօնեմք Օհանի վերամուսնութիւնը և Հուփսիմէն

կը զրկենք Եկեղեցւոյ հաղորդակցութենէն :

24. Յուլիս 5. — Քղեցի Հռիփսիմէ Նորսիկեանի ամուսինը Երմիկ Նորսիկեան իր կինը լքելով Ամերիկա մեկնած է : Տասը տարիներէ ի վեր առանց հետաքրքրուելու կնոջմով հոն ամուսնացած է :

Լուծելով Երմիկի և Հռիփսիմէի ամուսնութիւնը , կ'արժանանան Հռիփսիմէի վերամուսնութիւնը և Երմիկը իբրև անհաւատարիմ և անպարկեշտ կը զրկենք Եկեղեցւոյ հաղորդակցութենէն :

Հալեպի Կրօն. Ժողովոյ Մայիս 4 Համար 41,

Յուլիս 12, Համար 108 Գրութիւնք

25. Յուլիս 15. — Մարաշցի Եսայի Ազատողուեան 1927 Փետր. 8 խնդրագրով կը յայտնէ թէ Քիլիսի մէջ ամուսնացած է Քիլիսցի Ազնիւ Փրիկիճեանի հետ : Եսայի զինուորագրուելով Սիւրբիոյ ներսերը կը զրկուի : Զինագրարին Հալեպ վերադառնալով , կինը Քիլիսի Հայր. Միութեան կեղծ վկայականով 1923ին ամուսնացեալ կը գտնէ :

Լուծելով Եսայիի և Ազնիւի ամուսնութիւնը , կ'արժանանան Եսայիի վերամուսնութիւնը :

26. Յուլիս 15. — Այնթապցի Կարապետ Թանկուզեանի կնոջ Վիքթորիայի , ծնեալ Փալուստեան , ամուսնական խնդիրը : Կարապետի Ապրիլ 27 խնդրագիր քննութեան կ'առնէ Դատ. Խորհուրդը և կը հաստատուի Վիքթորիայի անհաւատարմութիւնը :

Լուծելով Կարապետի և Վիքթորիայի ամուսնութիւնը , կ'արժանանան Կարապետի վերամուսնութիւնը և կը զրկենք Վիքթորիան :

27. Յուլիս 15. — Կիւրինցի Համբարձում Քիզիր-

եան կ'ամբաստանէ իր կինը Ովսաննան , ծնեալ Եանդընեան , իբրև անհաւատարիմ և անբարոյ : Հինգ տարի բաժնուած կ'ապրին և մէկուկէս տարեկան տղայ մը ունին , պտուղ ապօրինի կենակցութեան , և Կաթոլիկներու մկրտել տուած է : Ըստ քննութեան Ովսաննա խոստովանած է թիւրքէ մը առած ըլլալը եւ այժմ ալ յղի է Գոնիացի Հաճիին հետ յարաբերուելէն :

Լուծելով Համբարձումի և Ովսաննայի ամուսնութիւնը , կ'արժանանան Համբարձումի վերամուսնութիւնը և Ովսաննան դեռ ևս կաթոլիկ , կը զրկենք :

28. Յուլիս 15. — Երզնկացի Խաչիկ Գաղանճեան 1927 Ապրիլ 18 գրութեամբ կ'ամբաստանէ իր կինը Սեբաստացի Դշխոյի , ծնեալ Զինարեան , սիրային յարաբերութիւնը Հաճընցի Օննիկ Մարգարեանի հետ : Դշխոյի սայթաքումներուն պատճառը Խաչիկը կը համարին , որով այր և կին յանցաւոր են :

Եթէ համերաշխ ապրիլ չուզեն , կը հրամայենք բաժան ապրիլ :

Հալեպի Կրօն. Ժողովոյ Համար 114

Եւ Յուլիս 26 Գրութիւնք

29. Օգոստ 14. — Եդեսացի Ազնիւ (Ֆարիզ Նետէյտի) 11ամեայ ամուսնացած են Եդեսացի Քիլտանի Ֆարիզի հետ , պսակադրութեամբ Քիլտանի Եկեղեցւոյն : Վեց ամիս ետքը իրարմէ կը բաժնուին . Ազնիւի Հալեպ մօրը քով կ'ապրի մաքուր և պարկեշտ կեանքով : Այս բաժանման էական պատճառ կը համարին Ազնիւին անչափահասութիւնը և զաւանանքի տարբերութիւնը :

Լուծելով Ազնիւի եւ Ֆարիզի ամուսնութիւնը , կ'արժանանան Ազնիւի վերամուսնութիւնը :

30. Օգոստ. 14.— Արաբկիրցի Մկրտիչ Տէմիրճեան չորս տարի առաջ ամուսնացած է համաքաղաքացի Վարդուհի Սէլվէրեանի հետ. բայց ամուսնութենէ քիչ վերջը անբարոյ կեանքի անձնատուր կ'ըլլայ թիւրքերու հետ, զոր կը հաստատեն Արաբկիրէն նոր եկողներ:

Լուծելով Մկրտիչի և Վարդուհիի ամուսնութիւնը կ'արտօնեմք Մկրտիչի վերամուսնութիւնը և Վարդուհին կը զրկենք եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

31. Օգոստ. 15.— Տիգրանակերտցի 24ամեայ Զարուհի Ալեանաքեան, տարագրութեան մէջ ծնողքը կորսուած ըլլալով 1917ին՝ ի Տիգրանակերտ սպառնալիքով ամուսնացուցած են համաքաղաքացի Ասորի Կաթուրի Ապտիւլ Բէրիմի հետ, որ խաղամուլ, արբեցող և խառնակեաց, քիչ ժամանակի մէջ Զարուհիի զարգեղէնները և հարուստութիւնը կը փճացնէ և կը յայտարարէ՝ որ իբրև կին չ'ընդունիր Զարուհին:

Լուծելով Ապտիւլ Բէրիմի և Զարուհիի ամուսնութիւնը, կ'արտօնեմք Զարուհիի վերամուսնութիւնը:

32. Օգոստ. 15.— Օրտուցի 25ամեայ Յակոբ Աւետեան՝ Բէլէկեան որբանոցի սաներէն 16ամեայ վանեցի Հռիփսիմէի հետ կ'ամուսնանայ, որ վեց ամիս յետոյ քանիցս լքելով ընտանեկան յարկը ապաստանած է Իսլամ Արաբի մը տունը, զոր կը հաստատէ որբանոցի Տնօրէն Տօքթ. Ամատեան: Ի վերջոյ Հռիփսիմէ Սիվրիհիտարցի 22ամեայ զինուորագիր Դաւիթի հետ Դամասկոս փոխադրուած է:

Լուծելով Յակոբի և Հռիփսիմէի ամուսնութիւնը, կ'արտօնեմք Յակոբի վերամուսնութիւնը և Հռիփսիմէն կը զրկենք եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

33. Օգոստ. 15.— Ագտաղ-Մատենցի 28ամեայ Սուլթան, ծնեալ Փափաղեան, 1915ին ամուսնացած է Եօզրատցի Օննիկ Փարմազարդեանի հետ. տարագրութեան զիրար կը կորսնցնեն, 1920ին Ատանայի մէջ իրարու կը հանգիւյլն: Ութ տարի միասին ապրելով զաւակ չեն ունենար: Օննիկ անպրակ կնոջ մը միանալով կը մերժէ օրինաւոր կինը:

Լուծելով Օննիկի և Սուլթանի ամուսնութիւնը, կ'արտօնեմք Սուլթանի վերամուսնութիւնը և Օննիկը կը զրկենք եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

34. Օգոստ. 15.— Մշեցի 46ամեայ Միրտօ Սերովբեան 1908ին ամուսնացած է Մուշի մէջ համաքաղաքացի Մեղքոն Սերովբեանի հետ և ունեցած է զաւակ մը, այժմ 19ամեայ. Լնդհանուր Պատերազմին ակամայ իրարմէ բաժնուած, Միրտօ հաւատարիմ մնացած է ամուսնական ուխտին ի Հալէպ: Մեղքոն վաղարշապատ անցած, ամուսնացած է և զաւակներ ունի: Գեր. Խորհուրդն ալ կը հաստատէ Մեղքոնի ամուսնութիւնը:

Լուծելով Միրտօյի և Մեղքոնի ամուսնութիւնը, կ'արտօնեմք Միրտօյի ամուսնութիւնը:

35. Օգոստ. 15.— Եօզրատցի 20ամեայ Վիքթորիա Պօտանեան ամուսնացած է ի Պէյրութ 1925 Փետրուար 12ին Զէյթունցի Անդրանիկ Պօտանեանի հետ: Տիկնոջ կեանքը սկիզբէն անհանդուրժելի եղած է, բայց առ ի պարկէշտութիւն հանդուրժած է: 1926 Մարտ 4 խնդրագրով կ'ամբաստանէ Անդրանիկը իբրև անառակ, ընտանեկան կեանքին անհաւատարիմ, զոր կը հաստատեն ծանօթ և վստահելի անձինք:

Լուծելով Անդրանիկի և Վիքթորիայի ամուսնութիւնը, կ'արտօնեմք Վիքթորիայի վերամուսնութիւնը:

36. Հոկտ. 9.— Աշոտցի նեկտար Սահակեանի 1928 Օգոստ. 30 խնդրագիրը նկատի առնելով և ստուգելով որ խնդրական ամուսնալուծման թուականէն ի վեր ապրած է պարկեշտ կենօք և աշխատութեամբ ճարած է իր հացը, կը միջնորդուի արժուէլ վերամուսնութիւնը:

Կրօն. ժողովոյ և Աշոտի Հայր. Միութեան բարձր վկայութեամբ կ'արժուէլ նեկտարի վերամուսնութիւնը:

37. Հոկտ. 9.— Եղեսացի Ապրիլ Ապրիլեանի և Սասունցի Միսաք Դաւիթեանի ամուսնական խնդրոյ մասին Պատ. Դատ. Խորհրդոյ կրկին տեղեկագրերը նկատի առնելով բաւական գտանք եզրակացութիւնը: Կ'արժուէլ Ապրիլի վերամուսնութիւնը:

38. Հոկտ. 9.— Սասունցի Միսաքին և կնոջ Ազնիւին ամուսնալուծման բանաւոր պատճառ մը չըլլալով՝ կը յանձնարարենք վերակոչել յԱտեան և յորդորել ի հաշտութիւն, հակառակ պարագային առկախ թողուլ և երկուստեք ըլլալիք խնդիրները նկատի չ'առնել:

Պեյրուքի Կրօն. ժողովոյ Համար 678  
Եւ Հոկտ. 3 Գրուքիւնք

39. Հոկտ. 9. Երզնկացի 34ամեայ Յարութիւն Տ. Վարդանեան 1928 Յունուար 19 բողոքագրով կ'ամբաստանէ իր կինը Բարբերդցի Թագուհի Տօնապետեանը 30ամեայ իբրև խառնակեաց. կինն ալ կ'ամբաստանէ էրիկը իբրև ծոյլ, անհոգ և կասկածոտ: Կրօն. ժողովը կը հաստատէ կնոջ անբարոյութիւնը և մահմետականի մը միացած ըլլալը և Յարութիւնի պարկեշտութիւնը:

Լուծելով Յարութիւնի և Թագուհիի ամուսնու-

թիւնը, կ'արժուէլ Յարութիւնի վերամուսնութիւնը և Թագուհին կը զրկենք Եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

40. Հոկտ. 9.— Կեսարացի Մայրենի հակառակ իր խնդրագրին, տասներկու տարեկան, բռնութեամբ պսակած են Յովսէփ Ղազիրեանի, 15 ամեայ հասակին մէջ. հաւանութեամբ և հաճութեամբ պսակուած են: Յորդորել որ իրենց ուխտին համաձայն հաշտ և փոխադարձ ներողութեամբ ապրին:

Հալեպի Կրօն. ժողովոյ գրութեան կից Դատ. Խորհրդոյ  
Համար 261 Եւ Հոկտ. 11 քցակաւ սեղեկագիր

41. Հոկտ. 15.— Գիւլիսի Սարգիս Խաչատուրեանը իբրև անփորձ երիտասարդ, 20ամեայ, զոհ եղած է վարպետ կիներու և պսակուած է Յոյն գաղթական քահանայի մը պսակադրութեամբ հօրեղբոր Խանըմ անուն աղջկան հետ: Պսակադրութենէ մի քանի ամիս ետքը կասկածելով կնոջ անհաւատարիմ ընթացքին և բարոյականին, կը բաժնուի: Կրօն. ժողովը կը հաստատէ, որ Խանըմ ամուսնութենէ առաջ անպարկեշտ կեանք մը ապրած է:

Լուծելով Սարգիսի և Խանըմի ապօրինի պսակը իբրև ազգախառնութիւն, կ'արժուէլ Սարգիսի վերամուսնութիւնը և Խանըմը կը զրկենք Եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

Գեր. Եփրեմ Ծ. Վրդ. ի Հոկտ. 17

Համար 2824 Գրուքիւնք

42. Հոկտ. 22. Եթէ Իփէկի զղջումը անկեղծ է, և եթէ Կրօն. ժողովը համոզուած Չահլէի Թաղ. Խորհրդոյ Հոկտ. 16 վկայագրին վրայ, բաւական կը հա-

մարինք կրած ապաշխարանքը :

Կ'արսոնեմֆ վերամուսնութիւնը ուխտագիր առնելով պարկեշտ ապրելուն :

43. Հոկտ. 22. Էվէրէկցի Կարապետ իր օրինաւոր կինը Անիձան ընդունելով Պաղտատ տարաւ :

Կ'արսոնեմֆ Եղեսացի Յովհաննէս Մարտիրոսեանի վերամուսնութիւնը, եթէ նիւթապէս և բարոյապէս ի վիճակի է ընտանիք կազմելու և պահելու :

44. Նոյ. 19.— Արմենակ Գորնազարեան ի Պէյրուսթ 1927ին ամուսնացած է Այնթէպցի Ալիս Ուզուրլեանին հետ, ուզած է զօքանչին և քենիին հետ միասին ապրիլ, սակայն տեղեկանալով որ քենին չորս տարի առաջ ամուսնացած և բաժնուած է էրիկէն եւ ուրիշներու հետ կը կենակցի, կնոջ հետ առանձին ապրելու համար կը բաժնուի զօքանչէն, որ կը թելադրէ Ալիսը ձգել էրիկը :

Գիշեր մը տան գոյքերը ժողովելով Ալիս մօրը հետ Գամասկոս կը փախչի : Տ. Արսէն վարդ. կը յաջողի հաշտեցնել և միասին ապրելու համոզել, բայց քանի մը օր վերջը Հայֆա կը փախչին. ժամանակ մը վերջ կը վերադառնան եւ ոստիկանական քննութեամբ կը հաստատուի Ալիսի շօքէրի մը հետ կենակցութիւնը եւ փոխանցիկ հիւանդութեամբ վարակուիլը ու հասարակաց կիներու կարգին կ'արձանագրուի :

Լուծելով Արմենակի եւ Ալիսի ամուսնութիւնը, կ'արսոնեմֆ Արմենակի վերամուսնութիւնը եւ Ալիսը կը զրկենք Եկեղեցւոյ հաղորդակցութենէն :



1929

Հալեպի Կրօն. Ժողովոյ Համար 34  
Եւ Դեկտ. 13 Գրուիւն

1. Յունվար 11.— Քղեցի Յարութիւն Գրիգորեանի և կնոջ Խարբերդցի Մարիամի ամուսնական խնդրին վերաքննութեամբը հաստատուած է Յարութիւնի ապօրինի յարաբերութիւնը այն կնոջ հետ, որուն խնամոց յանձնած է իր հնգամեայ զաւակը : Վերաքննութեամբ հաստատուած է յանցապարտութիւնը թէ Յարութիւնի և թէ իր կնոջ Մարիամին : Թողուլ որ այր և կին հաշտուին և իրարու մեղքը քաւեն մաքրուած կեանքով. հակառակ պարագային զրկել Եկեղեցւոյ հաղորդակցութենէն, և խստիւ պատժել որեւէ քահանայ, որ շօշաքաղութեան համար մասնակից կ'ընէ հոգեւոր մատակարարութեան :

Պէյրուսի Կրօն. Ժողովոյ Համար 34  
Եւ Փետ. 26 Տեղեկագիր

2. Փետր. 27.— Ատանացի 37 ամեայ Երուանդ Տէմիրճեան ամուսնացած է ի Մերսին Վերթին Անթէպլիեանի հետ և զաւակ չեն ունեցած : Երուանդ ամուսնութեան սկիզբը թէեւ կասկածներ ունեցած է կնոջ հաւատարմութեան մասին, բայց կենակցած է մինչեւ 1928՝ ուղղութեան բերելու յոյսով, և չը յաջողելով՝ ամուսնալուծում կը խնդրէ : Կրօն. Ժողովը քննութեամբ կը հաստատէ կնոջ յարաբերութիւնը Եզրա էամէրեանի հետ :

Լուծելով Երուանդի և Վերժինի ամուսնութիւնը, Կ'արսօնեմք Երուանդի վերամուսնութիւնը և Վերժինը իբրեւ խառնակեաց՝ կը զրկենք Եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

Գեք. Սուրեն Վրդ.ի 584 Համար Գրութիւն

3. Մարտ 4.— Վերամուսնութեան իրաւունք կը տրուի անոնց, որ մանրակրկիտ քննութեամբ կ'ամուսնալուծուին: Խաչատուր Սէֆէրեան պսակուած է յունական ծէսով և յոյն քահանայի ձեռքով: Հայ Եկեղեցին չը կրնար լուծել: Յունաց Եկեղեցիին կը պատկանի: Եռամսեայ պայմանաժամ կուտանք, որ Եօրկիան գայ ամուսնոյն միանայ. անհնազանդութեան պարագային՝ կը լուծենք Խաչատուրի պսակը:

4. Մարտ 4.— Հայէպցի Լեւոն Միհոնեանի կնոջ, Պրուսացի Մարի Ատալեանի, ըստ ձեզ Գարագաշեանի պսակադրութիւնը խաբէութեամբ կատարուած է և գլխաւոր խաբողը եղած է Ստեփան Ատալեան, որ ըստ իր յայտարարութեան Մարին կ'ըլլայ իր մօրաքրոջ աղջիկը:

Կատարուած պսակը խորհրդաւոր գաղտնապահութեամբ կատարուած ըլլալուն՝ անվաւեր կը հռչակենք և Եկեղեցւոյ հաղորդակցութենէն կը զրկենք նոր ամուսնացեալները: Հայրաբար կ'զգուշացնենք Տ. Թաթուրը, որ արթուն և զգաստ մնայ, որպէս զի այսօրինակ վեղձմանց տեղի չը տրուի:

Պէյրութի Կրօն. Ժողովոյ Համար 718

Եւ Փետր. 28 Գրութիւն

5. Մարտ 4.— Վերժին Տօնիկեան, 29 ամեայ, ծնեալ Տէվէգուլեան, 1928ին թիւրքերու ձեռքէն ապատուելով կը պսակուի Տէրէվանցի 65ամեայ Պաղ-

տիկ Տօնիկեանի հետ՝ հակառակ նախնեաց օրինաց: Վերժին ամուսնութեան օրէն կ'ենթարկուի անբնական անարգանքներու և չը կրնալով հանդուրժել, մա'նաւանդ էրկան ընդ այլում յարակցութեան: Կրօն. Ժողովոյ ջանքերուն հակառակ, Տօնիկեան Դամասկոս խոյս կուտայ, ուր կը շարունակէ գատապարտելի կեանքը:

Լուծելով Պաղտիկի և Վերժինի ամուսնութիւնը, Կ'արսօնեմք Վերժինի վերամուսնութիւնը և Պաղտիկը կը զրկենք Եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

6. Մարտ 5.— Տիվրիկցի Մարիամ Ախիկեան 1927 Ապրիլ 18 վճռագրով վերամուսնութենէ զրկած էինք մինչ բարւոք կենցաղավարութեան վկայուիլը: Անցեալ տարւոյ Յուլիս 20 խնդրագրով բարւոք կենցաղավարութիւնը վկայեալ Պաղտատի քահանաներէն, վերամուսնութեան իրաւունք կը խնդրէր: Բաւական համարելով երկամեայ ապաշխարութիւնը՝ կ'արսօնեմք վերամուսնութիւնը:

7. Մարտ 7.— Կեսարացի Մարի, ծնեալ Ագամեան, ամուսնացած է ի Դամասկոս էվէրէկցի Յակոբ Ղազիրեանի հետ 1924ին. առաջին օրէն սոսկումով փախած է մօրը քով: Եւ Տեսչութեան միջամտութեամբ վերադարձեր է էրկան: Դամասկոսի դէպքին Յակոբի հաւանութեամբ մօրը հետ Պէյրութ կ'երթայ, ուր գորգագործութեամբ հացը ապահոված և պատուաւոր ապրած է: Յակոբ կ'ամբաստանէ կինը իբրեւ այլոց հետ յարաբերութիւն ընող:

Լուծելով Յակոբին և Մարիին ամուսնութիւնը, Կ'արսօնեմք Մարիին վերամուսնութիւնը և Յակոբը կը զրկենք իբրեւ հաճոյամով և ընտանիք կազմելու անընդունակ:

Գահիրէէ Թորգոմ Արքեպիսկոպոսի Թիւ 313

Եւ Մարտ 25 Գրուքիւն

8. Ապրիլ 3.— Եղիսաբեթ Գարավարդանեանի և Յովհաննէս Դանիէլեանի ամուսնական խնդրոյն առթիւ, աչքէ անցուցինք Կրօն. Ժողովոյ արձանագրութիւնները և յանցաւոր գտանք Յովհաննէսը յեղեսիա կրկնամուսնութեամբ, առանց օրինաւոր կնոջմէն լուծուած ըլլալու և վերամուսնանալու իրաւունք ունենալու: Յովհաննէս կ'ամբաստանէ Եղիսաբեթը թէ Գահիրէ հիւրասիրուած Ուրֆացի Վարդուհիի Մովսէս անուն տղուն հետ յարաբերութիւն կը հաստատէ և կը չարունակէ:

Լուծելով Յովհաննէսի և Եղիսաբեթի ամուսնութիւնը, իրաւունք կուտանք վերամուսնութեան, պայմանաւ որ Մովսէսը առնէ, եթէ ազապ է. հակառակ պարագային՝ գրաւոր ուխտագիր տայ որ հաւատարիմ պիտի մնայ ընտրելի ամուսնոյն:

Պէրուքի Կրօն. Ժողովոյ Համար 713

Եւ Փետր. 26 Գրուքիւն

9. Ապրիլ 13.— Եօզղատի Բումտիկինցի Մարտիրոս Շահինեան 1920ին Ատանայի մէջ կ'ամուսնանայ Կիւրինցի Նազըլ Փունարճեանի հետ: Մարտիրոս կ'ամբաստանէ Նազըլն իբրեւ անբարոյ և Դամասկոսի մէջ ապօրինի կերպով յարաբերեալ Ատանացի Կարապետ Չամիչեանի հետ, որմէ զաւակ կ'ունենայ: Զահլէի Տ. Սարգիս քահանան կը հաստատէ Նազըլի ապօրինի կենսակցութիւնը:

Լուծելով Մարտիրոսի և Նազըլի ամուսնութիւնը, կ'արժանանանք Մարտիրոսի վերամուսնութիւնը և Նազըլն իր հոմանիւնի հետ կը զրկենք Եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

10. Ապրիլ 16.— Ղընըմիէցի Մարիամ Պընթ Հաննէ Ըսէֆի կը քողոքէ, որ իր այրը Քէսապցի Մարտիրոս Թութիկեան, գործ գտնելու պատրուակաւ չորս տարի առաջ Կիպրոս գնացեր և հոն Մարտինեանու ձեռքով պսակուեր է: Մարիամ և Մարտիրոս եթէ Հայ Եկեղեցւոյ զաւակ են, լուծելով ամուսնութիւնին, կ'արժանանանք Մարիամի վերամուսնութիւնը. իսկ եթէ տարբեր դաւանութենէ են, Մարիամ թող դիմէ իր եկեղեցւոյ հոգեւոր իշխանութեան:

11. Ապրիլ 20.— Հաճընցի Սմբատ Պահատեանի և համաքաղաքացի կնոջ 20ամեայ Նուարդի, ծնեալ Գլուխեան, խնդրոյն տեղեակ էինք, Կրօն. Ժողովոյ Համար 713 Փետր. 24 Տեղեկագրէն, որով կ'արդարացնէր Սմբատի լքումը զՆուարդ. իսկ Արժ. Տ. Գրիգոր Աւագ Քահանայն որոշ կերպով ցոյց կուտար լքումի իբրեւ հետեւանք Նուարդի անբարոյ կեանքի մէջ նետուելը:

Լուծելով Սմբատի և Նուարդի ամուսնութիւնը, Սմբատը միամեայ ապաշխարութեան կ'ենթարկենք, որ միջոց ունենայ զգաստ և ողջախոհ կենցաղավարութեամբ ընտանեկան պատիւը բարձր պահելու, իսկ Նուարդը կը զրկենք իբրեւ հրապարականախատ անառակ:

12. Մայիս 2.— Հաճընցի Աւագ Տաքէսեան, որ ութ տարի առաջ ամուսնացած է Ասորի Կաթողիկ Մարթա Իսրայէլ Էօպչէկեանի հետ, 1927 Մարտ 2 գրութեամբ կ'ամբաստանէ զայն իբրեւ յայտնի չնացող Զաքար Թէրզիեանի հետ և ամուսնալուծում կը խնդրէ: Աւագի ամբաստանութիւնը կը հաստատէ Տ. Դիոնիս Աւագ Քահանայն:

Լուծելով Աւագի և Մարթայի ամուսնութիւնը, կ'արժանանանք Աւագի վերամուսնութիւնը:

Հալեպի Կրօն. Ժողովոյ Համար 48  
Եւ Դաս. Խորհրդոյ Քննական Տեղեկագիր՝ Համար  
284 Յունվար 20 Եւ այլ Դրուքիւնք

13. Մայիս 6. — Նիզիպցի Գէորգ Գալայճեան ա-  
մուսնացած է վահան Թիւթիւնճեանի Սաթենիկ աղջը-  
կան հետ, հակառակ որ պատերազմի միջոցին թիւր-  
քի մը հետ ամուսնացած էր: Արտագաղթին Հալէպ  
գալով Սաթենիկ անպարկեշտ կանանց հետ յարաբեր-  
ուելով՝ ընտանեկան կեանքի դէմ ալ մեղանչած է:  
Ի վերջոյ հինգ տարեկան տղուն հետ ի Նիզիպ թիւրք  
ամուսնոյն կը միանայ:

Լուծելով Գէորգի և Սաթենիկի ամուսնութիւնը,  
կ'արտօնեմք Գէորգի վերամուսնութիւնը և Սաթենիկը  
կը զրկենք:

14. Մայիս 6. — Էյպէզցի Սամուէլ Վարդան Յա-  
րութիւնեան, ըստ օրինի Եկեղեցւոյ, կը պսակուի Քի-  
լիսցի Նազու Օգճեանի հետ: Յետ ներգաղթի՝ ատեն  
մը սիրով կ'ապրին: Տակաւ ընտանեկան խաղաղ  
կեանքը կը խռովի և Յոյն-Օրթոտոքս քահանայի ձեռ-  
քով առանց ամուսնալուծման կը պսակուի հայրենա-  
կից Յարութիւն Օգճեանի հետ:

Լուծելով Սամուէլի և Նազուի ամուսնութիւնը,  
կ'արտօնեմք Սամուէլի վերամուսնութիւնը և Նազուն  
կը զրկենք Եկեղեցւոյ հաղորդակցութենէն:

15. Մայիս 16. — Սսեցի Սարգիս Ասլանեանի և  
կնոջ Քիլտանի ձէմիլէ Նուրի ամուսնութիւնը կա-  
տարուած է Մամուրիէի մէջ իսլամ նիքեահով:  
Անհաշտելի անհամաձայնութեամբ ձէմիլիէն կը թողու  
Սարգիսը և ծնողքին տունը կը դառնայ: Քիլտանի  
հոգեւորականը կը հաղորդէ Տ. Գրիգոր Աւագ Քահա-  
նայ Մինասեանին ձէմիլիէի ամուսնութեան խզումը:

Լուծելով Սարգսի և ձէմիլիէի ամուսնութիւնը,  
կ'արտօնեմք Սարգսի վերամուսնութիւնը խոստմնա-  
գրով որ առնելիքին հետ պիտի վարուի իբրեւ կատար-  
եալ մարդ:

Հալեպի Կրօն. Ժողովոյ Համար 102  
Եւ Մայիս 23 Պատօնագիր

16. Մայիս 28. — Թրքացեալ Նիկողոս Քիւրքճեա-  
նի այրիացեալ ապօրինի կինը՝ Վարդանոյշ Թահմազ-  
եանի պսակին վկայական տուած է 1922 Մարտ 3 ամ-  
սաթուով, հակառակ պսակին անվաւեր հռչակուելուն  
և պսակազիր քահանային պատժուելուն: Գրեցինք  
Դամասկոս, որ անվաւեր հռչակուած պսակի վկայա-  
կանը առնուի Վարդանոյշի ձեռքէն:

17. Մայիս 28. — Ատանացի Յակոբ Աթէշլեանի  
Պաղտատէն գրած 1928 Նոյ. 20 գրութիւնը նկատի  
առնելով՝ իրաւացի գտանք պահանջը, քանի որ իր  
կինը Ռահէլ ի Ճարապուլուս հոմանիին, Տօքթօր Յա-  
րութիւնի հետ տարիներով կը կենակցի:

Լուծելով Յակոբի և Ռահէլի ամուսնութիւնը,  
կ'արտօնեմք Յակոբի վերամուսնութիւնը և Ռահէլը հո-  
մանիին հետ կը զրկենք Եկեղեցւոյ հաղորդակցու-  
թենէն:

18. Յունիս 6. — Վահկացի Յովսէփ 45ամեայ  
կ'ուզէ ամուսնանալ իր քենիին հետ, որ 30ամեայ է:  
Յովսէփին առաջին կինը Մարիամ 1914ին մեռած և  
թողած է 14ամեայ աղջիկ մը: Երկրորդ կինը Մարիցա  
վեց ամիս առաջ մեռած է Մամլըթէյնի թոքախտանո-  
ցը՝ թողով 10ամեայ պղտիկ մը: Յովսէփ հացագործ  
է ընտանիք պահելու բաւական:

19. Յունիս 9. — Մարաշցի Յակոբ Զէյթունեանի  
կնոջ Քիլիսցի Աննայի, ծնեալ Մազմանեան, վեներա-

կան ախտով վարակուած ըլլալը և այլոց հետ ապօրինի կենակցութիւնը բժշկան քննութեամբ և ոստիկանական տեղեկագրով հաստատուած է :

Լուծելով Յակոբի և Աննայի ամուսնութիւնը, կ'արտօնեմք Յակոբի վերամուսնութիւնը և Աննան կը զրկենք Եկեղեցւոյ հաղորդակցութենէն :

20. Զէյթունցի Լիբանանաբնակ զինուոր Սարգիս Զինթիլեան 1929 Մայիս 12ին կ'ամբաստանէ կինը, Մարաշցի Վերոնիքան, ծնեալ Պետօեան, իբրև անհաւատարիմ, ընտանեկան յարկը լքող և անբարոյ արաբներու հետ գտնուող : Սարգսի ամբաստանութիւնը կը հաստատէ Դամասկոսի Պատրիարքական Փոխանորդը :

Լուծելով Սարգսի և Վերոնիքայի ամուսնութիւնը, կ'արտօնեմք Սարգսի վերամուսնութիւնը, իսկ Վերոնիքան, եթէ ստոյգ է, նոր ամուսնութիւնը ապօրինի և անվաւեր կը յայտարարենք : Հաղորդել Մուսուլի Ազգ. Իշխանութեան :

21. Յունիս 9. — Կեսարիոյ երմէյէթ գիւղէն 38 ամեայ Տիգրան Ամաճեանը, որ 1920ին ամուսնացած է յԱտանա Սեբաստացի Սիրանոյշի հետ, ծնեալ Գարա Օհանեան, 1929 Մայիս 13 խնդրագրով կ'ամբաստանէ կինը, որ ընտանեկան յարկը լքելով երկու զաւակներով Թրիփօլի մէջ ապօրինի կը կենակցի Մարաշցի Յովսէփ Տէօքմէճեանի հետ : Թրիփօլի Թաղ. Խորհուրդը կը հաստատէ Տիգրանի ամբաստանութիւնը :

Լուծելով Տիգրանի և Սիրանոյշի ամուսնութիւնը, կ'արտօնեմք Տիգրանի վերամուսնութիւնը և Սիրանոյշը կը զրկենք Եկեղեցւոյ հաղորդակցութենէն :

22. Յունիս 9. — Պողազլիեանցի ձիւնի Ազգ. Որբանոցի որբուհիներէն Հռիփսիմէ Մինասեան 1929

Մայիս 25 խնդրագրով կրօն. Ժողովին կը յայտնէ որ երեք տարի առաջ ամուսնացած է Ատանացի Նազար Մարգարեանի հետ և ամուսնալուծուած է : Զեր միամեայ կենակցութեան ամուսինը 1928 Մարտ 9ին Փաթրունի մէջ սպաննելով հօրեղբորդին և կինը, ցկեանս տաժանակիր աշխատութեան դատապարտուած է :

Լուծելով Նազարի և Հռիփսիմէի ամուսնութիւնը, կ'արտօնեմք Հռիփսիմէի վերամուսնութիւնը :

23. Յունիս 27. — Ի Գոնէթրա Յակոբ Շամլեանի պսակը արամբի Մարիին, որ քոյրն է Ստեփան Ատալեանի, որ խաբէութեամբ պսակել կուտայ : Եթէ Հոգատար Կառավարութիւնը ընտանեկան կեանքը յարգող ըլլար, կարելի էր պատժել տալ Ատալեանը :

24. Յունիս 27. — Կեսարացի Մայրենի Ատալեան քանիցս ընտանեկան յարկը լքած և խառնակեցութեան անձնատուր եղած է : Մայրենի կինն է Յակոբ Խաչերեանի : Խնդրոյն քննութեամբ ապացուցուած է Մայրենիի անբարոյ կեանքը, իսկ Յակոբ ըստ կրօն. Ժողովոյ՝ պատուաւոր, պարկեշտ և մաքուր կեանք ունեցած է :

Լուծելով Յակոբի և Մարիի ամուսնութիւնը, կ'արտօնեմք Յակոբի վերամուսնութիւնը իսկ Մարիին կը զրկենք :

25. Յունիս 28. — Խարբերու Սորսէ գիւղէն Պետրոս Պետրոսեանի խաբէական ամուսնական խընդրին թուղթերը նկատողութեան առնելով՝ Քննիչ Յանձնաժողովի եզրակացութիւնը բանաւոր գտանք : Յաւալի է որ քահանայք Առաջնորդարանի վարկարեկումէն չեն ազդուիր : Պսակաղիր քահանային չարաչահութեան ի պատիժ մէկ ամիս կախակայումը քահանայական պաշտամունքէ :

Գեր. Եփրեմ Ծ. Վրդ.ի Նամակ Համար 5  
Եւ Յուլիս 28

26. Յուլիս 5.— Բէսապցի Մարտիրոս Թէօթիկեան չորս տարի առաջ Կիպրոս կ'երթայ և իբրեւ Մարոնի պսակուած է Մարոնի Քահանայի ձեռամբ: Նախորդ պսակը Պատուելիի ձեռամբ կատարուած, պարագաներու բերմամբ հայ քահանայ չըլլալուն:

Լուծելով Մարտիրոսի և Մարիամի ամուսնութիւնը, կ'արժանանայ Մարիամի վերամուսնութիւնը՝ պայմանաւ որ ընտրածը Հայ Եկեղեցւոյ զաւակ և բարեբարոյ վկայուած ըլլայ:

Գեր. Արսաւազդ Ծ. Վրդ.ի Նամակ Համար 9404  
Եւ Յուլիս 5

27. Յուլիս 6.— Ի յարգանս ձեր միջնորդութեան բաւական կը համարինք Տ. Նշան Քահանայի թեթեւազոյն ապաշխարանքը և կ'արժանանանք փիլոնակրութիւնը և պաշտամանց մասնակցութիւնը:

Հայկալի Պատ. Կրօն. Ժողովոյ Համար 124  
Եւ Յուլիս 12 Նամակ

28. Յուլիս 17.— Կեսարացի ի Գըրըգ—Խան բընակող Խաչեր Գասպարեանը և Կինը Թագուհի Գալայճեան, մին քան զմիւսն ուխտազանց: Ըստ Քննիչ Յանձնաժողովի՝ Խաչեր ինքը պատճառ եղած է կնոջ գայթակղական արարքներուն, Կինը թիւրքերուն հետ յարաբերուելուն՝ անկարելի եղած է էրկան հետ վերամիութիւնը:

Կախակայուած կը թողունք մինչեւ Խաչեր զգաստութիւն և բարի վարուց վկայութեան արժանանայ:

29. Յուլիս 17.— Պէլանցի Մարիամ Կարապետ Կիւլեան ամուսնացած է համաքաղաքացի Յովհաննէս

Չէրէքճեանի հետ: Քանի տարիներէ ի վեր բաժնուած են Յովհաննէսի անառակութեան պատճառաւ: Ներկայիս Յովհաննէս ապօրինի կը կենակցի Մարիամ Պալլքճեանի հետ:

Լուծելով Յովհաննէսի և Մարիամի ամուսնութիւնը, կ'արժանանայ Մարիամի վերամուսնութիւնը և Յովհաննէսը հոմանիին հետ կը զրկենք Եկեղեցւոյ հարողակցութենէն:

30. Յուլիս 17.— Սասունցի Միսաք Դանիէլեանի և կնոջ Ազնիւ Պէզիրկանեանի խնդիրը տարիներէ ի վեր քննութիւն եղած և վերամիութիւնը անկարելի եղած է:

Լուծելով յիշեալներուն ամուսնութիւնը, կ'արժանանայ Միսաքի վերամուսնութիւնը և Ազնիւը վեցամսեայ ապաշխարանքի կ'ենթարկենք:

31. Յուլիս 17.— Պոլսեցի (Կեղծ) Եւրոպացի Պետրոս Յակոբեան (Կեղծ) Օգլաղեան ամուսնացած է ի Պոլիս, բայց իր քենիին մահուան պատճառ ըլլալով իբրեւ ոճրապարտ փախած և ինքնութիւնը կորսնցնելու համար փոխած է ծննդավայրը և ազգանունը: Լաւ կ'ըլլար որ իրապէս կորսուէր: Պոլսոյ Հոգեւոր Իշխանութիւնը արտօնած է վերամուսնանալու Պետրոսի օրինաւոր կնոջ երանիկ Պապայեանի:

32. Յուլիս 17.— Եօզրատցի Անդրանիկ Յ. Ղազարեանի 33ամեայ, և կնոջ Եսթեր Այվազեանի խընդրոյն առթիւ, որ ամուսնական ըլլալէ աւելի ժառանգական է, թղթածրարը աչքէ անցնելով տեսանք որ երկու տարիէ ի վեր իրարմէ բաժնուած. մին ի Տարսոն և միւսն ի Լոնտոն կը բնակին:

Ինչ ինչ լուսաբանութիւններով միայն այս խընդրոյն վերջ մը կը տրուի Մշեցի Տիւպէր Ալլահվէրտեանի տեղեկութեամբ:

33. Յուլիս 27.— Տիլպէրի տուած տեղեկութիւնը կրօն. ժողովը իւրացուցած է: Դատ. Խորհուրդը քանիցս գրելով Տիգրանակերտի Հոգ. Հովուութեան ստուգած է, որ Տիլպէրի օրինաւոր ամուսինը Մեսրոպ Մուշեղեան ամուսնացած է ընդ այլում և չը բաժնուիր: Մեսրոպ և Տիլպէր ամուսնացած են 1922 Հոկ. 30ին: Մէկ տարի ետքը Հարէպ կը ղրկուի. օր մըն ալ Մեսրոպ կը լսէ որ իր կինը ամուսնացած է: Դժուարալուծելի բարդ խնդիր:

34. Օգոստոս 8.— Մեսրոպ Մուշեղեան Տիլպէրի վերամուսնութեան վրայ առանց յուսալքուելու քաշուած է Գամըչու և կ'աշխատի: Կրօն. ժողովը պատճառաբանեալ գրութեամբ Մեսրոպի վերամուսնութիւնը կը խնդրէ:

Կ'arsosentff Մեսրոպի վերամուսնութիւնը:

Հալեպի Կրօն. ժողովոյ Համար 14  
Եւ Մայիս 17 Գրուքիւն

35. Օգոստոս 19.— Տէօրթ-Եօլցի Լուսիա Եօրկի Յոյն Օրթոտոքս, 1920ին ամուսնացած է Յովհաննէսի հետ և զաւակ մըն ալ ունեցած է: Տարի մը առաջ Յովհաննէս լքելով Երուսաղէմի կողմերը կ'երթայ: Ամանի մէջ Ուրֆացի Մարիամ անուն Ասորի կնոջ մը հետ կը կենակցի:

Լուծելով Յովհաննէսի և Լուսիայի ամուսնութիւնը, կ'arsosentff Լուսիայի վերամուսնութիւնը և Յովհաննէսը կը զրկենք Եկեեղեցոյ հաղորդակցութենէն:

Մեր գրածը Պաղտատի Առաջնորդ. Փոխանորդ  
Վահան Գահանայ Թեմիբեանի

36. Հոկտ. 25.— Այնթէպցի Պօղոս Յարութիւնեանի և կնոջ Տիգրանակերտցի Մարիամ Ախիկեանի

ամուսնութիւնը լուծելով, Մարիամի վերամուսնութիւնը արգիլած էինք: Մարիամ 1928 Յուլիս 20 խընդրագրով իր թշուառութիւնը կը նկարագրէ: Բարուք կենցաղավարութիւնը հաստատուած է Պաղտատի Առաջնորդարանէն: Ապաշխարութիւնը բաւական համարելով կը ներենք և կ'arsosentff վերամուսնութիւնը:

